ԱՌԱՃԱ-ԱՍԱՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԼԻԼԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

42-8
Ա 16

014592
ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
ОБОЗНАЧЕННОГО ЗДЕСЬ СРОКА



ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌԱՁԱ-ԱՍԱՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ուսումնամեթոդական ձեռնարկ
լեզվաբանական բուհերի
բարձր կուրսերի
ուսանողների համար)

Երևան
Լինգվա
2013

ՀՏԴ 802.0(075.8)
ԳՄԴ 81.2 Անգլ g73
Ա 161

Ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Գրախոսներ՝
Գասպարյան Ա., մանկավարժական գիտությունների թեկնածու
Կազումյան Ի., բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղազարյան Հ., բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մարգարյան Ս., բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա161 **Աբրահամյան Լիլիթ, Առածա-ասացվածքային միավորը որպես թարգմանական խնդիր:** Ուսումնամեթոդական ձեռնարկ լեզվաբանական բուհերի բարձր կուրսերի ուսանողների համար/Լ. Աբրահամյան; Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան. - Եր.: Լինգվա, 2013. – 70 էջ:



ՀՏԴ 802.0(075.8)
ԳՄԴ 81.2 Անգլ g73

ISBN 978-9939-56-098-4

© Աբրահամյան Լ., 2013
© Լինգվա, 2013

ՆԱԽԱԲԱՆ

Առածներն ու ասացվածքները այն յուրակերտ լեզվական կառույցներն են, որոնք ամրագրել են այս կամ այն ժողովրդի հավաքական իմաստությունը. դրանք բովանդակալից, խորիմաստ դատողություններ են, ազդեցիկ հորդորներ, տպավորիչ խրատներ, օգտակար խորհուրդներ: Կարճ եզրակացություններ լինելով հանդերձ՝ այս յուրահատուկ դարձվածային միավորներն իրենց բովանդակության պլանում հարուստ տեղեկություն են պարունակում տվյալ ազգի մշակույթի, ավանդույթների, սովորույթների, վարքագծի, նիստուկացի, ըմբռնումների, աշխարհընկալման, մտածելակերպի և մարդաճանաչման առանձնահատկությունների մասին [Мамонтов, 2002; Орлянская, 2002]:

Ուստի առածներն ու ասացվածքները լեզվական համակարգի խոսք մուտք գործելու պատրաստ այն եզակի միավորներն են՝ դարձվածային կաղապարները, որոնց մեջ բյուրեղացել է արտալեզվական աշխարհի արտացոլանքը՝ բեկված տվյալ ժողովրդի հավաքական գիտակցության պրիզմայով:

Ձևի առումով, առածներն ու ասացվածքները բավականին բարդ, բազմաշերտ և տարաբնույթ լեզվական կազմավորումներ են՝ որոշակի գաղափարական ուղղվածություն, ոճական յուրակերպություն և գործաբանական միտում ունեցող նախադասություններ, որոնք աչքի են ընկնում հնչյունական, ռիթմիկ, բառային, ձևաբանական, շարահյուսական և այլ կարգի առանձնահատկություններով [Միրզոյան, 2002]:

Առածների և ասացվածքների լեզվաբանական հետազոտման խնդիրն էլ ավելի է կարևորվում, երբ այն դիտարկվում է միջմշակութային առնչությունների լայն համատեքստում, առանց որի դժվար է այսօր պատկերացնել քաղաքակիրթ աշխարհի լիարժեք կենսագործունեությունը:

Այսօրվա քաղաքակիրթ աշխարհի հայեցմամբ միջմշակութային առնչությունները ունեն բավականին լայն «աշխարհագրություն» և ընդգրկում են ամենատարբեր բնույթի գործունեության տեսակներ և այդ գործունեություններից ստացված արդյունքները: Մասնավորապես, միջմշակութային

առնչությունների ոլորտին են պատկանում բառարանագրությունը (բազմալեզու բառարաններ, այդ թվում նաև դարձվածաբանական, առածների ու ասացվածքների), լեզուների համեմատական ուսումնասիրությունը (զուգադրական լեզվաբանությունը), գրական երկերի թարգմանությունը (թարգմանաբանություն):

Գործունեության այս տեսակները միավորվում են լեզու–մշակույթ–մարդ եռանդամի շուրջ, որի վրա էլ, իր հերթին, է. Բենվենիստի գնահատմամբ, հենվում է մշակութաբանությունը, մի գիտակարգ, որն ուսումնասիրում է ազգամշակութային բաղադրիչներ պարունակող լեզվական երևույթները, լեզու և մշակույթ, լեզու և ժողովուրդ փոխհարաբերությունները [Бенвенист, 1974]:

Միջմշակութային առնչություններն ամենացայտուն կերպով դրսևորվում են թարգմանության ոլորտում, որն էլ, իր հերթին, շատ հաճախ մեկնաբանվում է որպես տարբեր մշակույթների հաղորդակցություն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ առածներն ու ասացվածքներն ազգամշակութային հարուստ տեղեկություն պարունակող լեզվական երևույթներ են, շատ հաճախ դրանց ուսումնասիրման համար առաջնային է համարվում զուգադրական մեթոդի կիրառումը, որը հնարավորություն է ընձեռում վերհանելու տարբեր քաղաքակրթությունների լեզվական, մշակութային և հանրահոգեբանական մասնակի և ընդհանրական առանձնահատկությունները:

Գիտական գրականության մեջ բազմիցս հայտնվել է այն կարծիքը, որ առածների և ասացվածքների զուգադրական ուսումնասիրությունը նպաստում է մեկ այլ ժողովրդի մշակույթի ըմբռնմանը, հոգեկերտվածքի գաղտնարանների բացահայտմանը և հնարավորություն է ընձեռում խորամուխ լինելու այլալեզու աշխարհընկալման յուրակերպությանը:

Վերջին ժամանակներս, առածների և ասացվածքների զուգադրական ուսումնասիրությունը դարձել է առածաբանության ամենահետաքրքիր ասպեկտներից մեկը և ուղղված է մարդկային մտածողության ընդհանրական տարրերի բացահայտմանը, չնայած հոգեբանական, հանրամշակութային տարրերի մեծ տարբերության, անգամ՝ հակասականության:

Հարկ է նշել, որ լեզուների ուսումնասիրության զուգադրական մեթոդը գնալով ավելի ու ավելի մեծ տեղ է գրավում ժամանակակից լեզվաբանության մեջ, քանի որ այն օգնում է «ներթափանցելու լեզվական երևույթների էության մեջ և առավել խորությամբ հասկանալու լեզվական գործընթացներն ուղղորդող օրինաչափությունները»: Լեզուների զուգադրումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու արդեն հայտնի երևույթների նոր կողմեր, արձանագրում նոր աղերսներ արդեն հայտնի փաստերի միջև [Ярцева, 1981: 4]:

Անդրադառնալով լեզվաշխարհի մշակութային գործոնին՝ որոշ հետազոտողներ առաջ են քաշում «ազգամշակութային իմաստույթ» հասկացությունը՝ գտնելով, որ այն կարող է դրսևորվել լեզվական տարբեր մակարդակներում (հնչյունական, բառային, շարահյուսական և այլն):

Լեզվաբանների կարծիքով այն առավել ցայտուն ի հայտ է գալիս դարձվածային մակարդակում, մասնավորապես առածներում և ասացվածքներում [Верещагин, Костомаров, 1980; Тер-Минасова, 2000]:

Վերոշարադրյալ դատողություններով է պայմանավորված տվյալ ձեռնարկի արդիականությունը:

Լեզվաբանական տեսանկյունից քննության կարող են առնվել առածների և ասացվածքների տարբեր հատկանիշները: Լեզվաբաններից շատերը առածների և ասացվածքների համար բնութագրական են համարում հիմնականում երեք հատկանիշ.

1. Միտքը կամ գաղափարը (այն ինչ խրատում, զգուշացնում, հորդորում է առածը կամ ասացվածքը)
2. Նկարագրական տարրը/տարրերը (այն առարկաներն ու երևույթները, կենդանիներն ու անձերը, որոնց միջոցով արտահայտվում է որոշակի գաղափար)
3. Պատկեր կամ ներքին ձև (այն իմաստատրամաբանական հարաբերությունները, որոնք հաստատվում են նկարագրական տարրերի միջև ուղղա-

կիորեն կամ անուղղակիորեն որոշակի գաղափար արտահայտելու համար):

Ուստի համեմատական ուսումնասիրության ենթարկել տարբեր լեզուների առածներն ու ասացվածքները նշանակում է նախ և առաջ հաշվի առնել վերը նշված երեք հատկանիշները: Այս երեք հատկանիշների փոխհարաբերությունների տիրույթում պետք է փնտրել առածների և ասացվածքների համարժեքության հիմնական պարամետրերը: Որպես պատրաստի լեզվական միավորներ՝ նրանք առկայանում են (խոսք են մուտք գործում) և դառնում ասության միավոր՝ իրականացնելով որոշակի գաղափարական, ոճական և գործաբանական գործառույթներ:

Ուշագրավ է այն փաստը, որ գիտական գրականության մեջ փորձ է արվել սահմանազատել «առած» և «ասացվածք» հասկացությունները: Դրանց հիմնական տարբերությունն այն է, արձանագրում են մի շարք հետազոտողներ, որ եթե ասացվածքը միտքն արտահայտում է ուղղակի, առանց այլաբանության և միջնորդավորման, ապա առածը՝ փոխաբերական ձևով՝ անուղղակի կերպով միջնորդավորվելով բնությունից վերցված օրինակներով [Միրզոյան, 2002; Նազարյան, 1999]: Խնդրո առարկա հասկացությունների սահմանազատման դժվարությունները շատ լեզվաբանների դրդել են մասնագիտական գրականության մեջ «առած» և «ասացվածք» եզրերը օգտագործել որպես հոմանիշներ: Այդօրինակ նույնացումը անտարակույս հիմնավորված է, քանի որ գործառույթների առումով առածի և ասացվածքի միջև տարբերություն չկա [Միրզոյան, 2002]:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ առած և ասացվածք լեզվական երևույթներն ավելի շատ ընդհանրություններ ունեն քան տարբերություններ, սույն ձեռնարկի շրջանակներում մենք չենք տարբերակում այդ հասկացությունները և գործածում ենք առածա-ասացվածքային միավոր եզրը կամ տվյալ եզրի հապավումը՝ ԱԱՄ:

Սույն ձեռնարկը միտված է ապահովելու ուսանողների իրազեկությունը առածա-ասացվածքային միավորների թարգմանության եղանակների մասին, ինչպես նաև ուսուցանելու ուսանողներին վերլուծել առածա-ասացվածքային

միավորների առկայացման ընթացքում տեղի ունեցող փոխակերպումների և թարգմանության լեզվական, ոճական և գործաբանական առանձնահատկությունները:

Այն անհրաժեշտ գիտելիքներ է տալիս առածա-ասացվածքային միավորների թարգմանության մասին և հարստացնում է ուսանողների բառապաշարն առածաբանության ոլորտում:

Մեր կարծիքով ձեռնարկը կնպաստի ուսանողների՝ անգլերենի առածա-ասացվածքային միավորները հնարավորինս համարժեք հայերեն թարգմանելու ունակությունների զարգացմանը:

«Առածա-ասացվածքային միավորը որպես թարգմանական խնդիր» ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է լեզվաբանական բուհերի մասնագիտական ֆակուլտետների անգլերենի բաժնի բարձր կուրսերի ուսանողների համար:

Հարկ ենք համարում նշել, որ ձեռնարկը բաղկացած է երկու բաժնից՝

- ❖ առածա - ասացվածքային միավորների թարգմանության եղանակները
- ❖ անգլերենի առածա-ասացվածքային միավորների առկայացումը բնագրում և թարգմանության մեջ:

Նշված բաժինները կոչված են զարգացնել ուսանողների թարգմանչական հմտություններն առածաբանության ոլորտում մի շարք վարժությունների միջոցով:

ԱՌԱԾԱ-ԱՍԱՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ձեռնարկի այս բաժնի նպատակն է ուսանողներին ուսուցանել առածա-ասացվածային միավորների թարգմանության եղանակները:

Թարգմանագիտական գրականության մեջ նշվում է, որ առածա-ասացվածքային դարձվածային միավորները թարգմանվում են թարգմանության տեսության մեջ լայն տարածում և գործածում գտած մի շարք եղանակների միջոցով, մասնավորապես միջլեզվական զուգահեռ համարժեքների, համաբանության, դիպվածային պատճենման, սովորական պատճենման, նկարագրական թարգմանության և հականիշային թարգմանության միջոցով:

Հարկ է նշել, որ զուգահեռ առածա-ասացվածքային միավորների թարգմանության ժամանակ ապահովվում է նույնականության ամենաբարձր աստիճանը: Զուգահեռ առածա-ասացվածքային միավորները կարող են ծագման միևնույն աղբյուրն ունենալ կամ էլ երկու լեզուներում կարող են առաջանալ միաժամանակ՝ մեկը մյուսից անկախ: Նրանք երկու լեզուներում էլ ունեն լեզվի կայուն դարձվածային միավորների կարգավիճակ:

Խոսելով դարձվածային միավորների միջլեզվական զուգահեռ համարժեքների մասին՝ Վ. Կոմիսարովը տարբերակում է համարժեքության հինգ մակարդակ, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է տեղեկատվության այն մասով, որի պահպանումը տարբերում է նրան նախորդ մակարդակից [Комиссаров, 1990]:

Այժմ ավելի մանրամասն ներկայացնենք Վ. Կոմիսարովի կողմից մշակած համարժեքության հինգ մակարդակները:

Այսպես, համարժեքության առաջին մակարդակում թարգմանության ժամանակ պահպանվում է միայն հաղորդակցության նպատակը, այսինքն՝ տեքստի հեղինակի մտադրությունը: Համարժեքության երկրորդ մակարդակը ենթադրում է թարգմանության տեքստում երկու տիպի տեղեկատվության պահպանում, այն է՝ հաղորդակցության նպատակը և իրավիճակի նկարագրությունը:

Համարժեքության երրորդ մակարդակում բացի վերը նշված երկու տիպի տեղեկատվությունից, պահպանվում է նաև իրավիճակի նույնացման մակարդակը, բացահայտվում տեղեկատվության իրականության նյութական ու գաղափարական օբյեկտները և նրանց հարաբերությունները:

Համարժեքության չորրորդ մակարդակում վերը նշված համարժեքության մակարդակների իմաստային նմանությունը սաստկանում է ասության մակարդակով, այսինքն ելակետային և թարգմանության տեքստի շարահյուսական կառուցվածքի անփոփոխ իմաստով, այսինքն որոշակի ձևով ընտրված, որոշակի կանոններով միավորված և որոշակի շարադասությամբ նշանների գծային շղթայով: Այսպիսի թարգմանության մեջ շարահյուսական կառուցվածքներն ածանցվում են ելակետային տեքստից ուղիղ կամ ոչ ուղիղ ձևափոխության միջոցով:

Եվ համարժեքության հինգերորդ մակարդակը լեզվական նշանների կամ բառերի մակարդակն է, որտեղ տարբեր լեզուների տեքստերի միջև կարող ենք գտնել հնարավորինս չափով ամենամեծ իմաստային նմանությունը: Այսպիսի թարգմանությունները փորձում են պահպանել ելակետային տեքստում կիրառված բոլոր բառերի իմաստը [Комиссаров, 1990: 56]:

Այսպիսով, համաձայն վերը նշված դասակարգման կարելի է ասել, որ առածա-ասացվածքային միավորի յուրաքանչյուր զուգահեռ թարգմանություն պատկանում է համարժեքության որևէ մակարդակին:

Ասվածից ելնելով՝ կարելի է հստակորեն նշել, որ միջլեզվական զուգահեռ համարժեքների կիրառումը առածա-ասացվածքային միավորների թարգմանության ժամանակ երաշխավորում է ոչ միայն իմաստի ճշգրիտ վերարտադրումը, այլ նաև թարգմանվող առածի արտահայտչականությունը և պատկերավորությունը:

Ներկայացնենք միջլեզվական զուգահեռ համարժեքների միջոցով թարգմանված մի շարք առածա-ասացվածքային միավորների օրինակներ՝

All is well that ends well. – Ամեն բանի վերջն է գովելի:

Fish begins to stink at the head. – Ձուկը գլխից է հոտում:

A drowning man will catch at a straw. – Ջուրն ընկնողը չոփից է բռնում:

A man is known by the company he keeps. – Ասա՝ ընկերդ ով է, ասեմ՝ ով ես դու:

Never fry a fish till it is caught. – Ձուկը ծովում բազար չեն անի:

Առածա-ասացվածքային միավորների թարգմանության եղանակներից է համարվում առածային/ասացվածքային համաբանությունը: Համաձայն մի շարք լեզվաբանների /Վ. Կոմիսարով, Ա. Նազարյան/ առածային կամ ասացվածքային համաբանությունը առածա-ասացվածքային միավորի նույնանման համարժեքն է, որը թարգմանության լեզվում ունի այլ ներքին ձև, այսինքն՝ այլ պատկերավոր հիմք, սակայն իմաստային համարժեքությամբ և՛ ելակետային, և՛ թարգմանության լեզվի առածային դարձվածքները նույնն են, այսինքն լիովին պահպանված է նրանց բովանդակության պլանը [Նազարյան, Բաղդասարյան, 2000: 72; Комиссаров, 1990: 58]:

Հետևաբար, շատ հաճախ անհրաժեշտ է դիմել թարգմանության լեզվի այնպիսի դարձվածային միավորների, որոնք իմաստային բովանդակության պլանով նման են ելակետային լեզվի դարձվածային միավորներին, բայց հիմնված են բոլորովին տարբեր ներքին պատկերների վրա:

Համաձայն Հ. Բաղդասարյանի՝ պատկերավորության կատեգորիան դասվում է միջլեզվական ընդհանրությունների թվին, քանի որ այն հատուկ է բոլոր լեզուներին: Տարբեր լեզուներում զուգահեռ պատկերավոր արտահայտությունների առկայությունը, թարգմանության ժամանակ պատկերավոր շատ արտահայտությունների ճիշտ վերարտադրման հնարավորությունը, ինչպես նաև հեղինակային-անհատական մի շարք պատկերների բառացի թարգմանության հնարավորությունը այդ կատեգորիայի համընդհանրության հաստատումն է: Այսպես, օրինակ, լեզվաբանի հավաստմամբ շատ դեպքերում կենդանափոխաբերականացումը համընկնում է տարբեր լեզուներում, որն էլ մարդկային մտածողության միասնականության վառ վկայություններից մեկն է:

Այս առնչությամբ լեզվաբանը ներկայացնում է մի քանի օրինակներ՝

խոզ (հայ.) – свинья (ռուս.) – կեղտոտ, փնթի մարդ

աղվես (հայ.) – лиса (ռուս.) – խորամանկ

էշ (հայ.) – осел (ռուս.) – հիմար, համառ [Բաղդասարյան, 1996: 44-45]:

Համաձայն Հ. Բաղդասարյանի՝ քննելով պատկերավորության խնդիրը՝ պետք է նշել նաև բառի, արտահայտության ներքին ձևի և պատճառաբանվածության մասին: Ըստ Վ. Հումբոլդտի, ներքին ձևը լեզվում մտածողության նյութականացման ձևն է, «ժողովրդի ոգու» արտահայտությունը, որն ակնհայտ է դարձնում ազգային աշխարհընկալման առանձնահատկությունները: Ներքին ձևը մտածական-լեզվական կապերի գործառական կաղապար է, որը հանդես է գալիս որպես միջանկյալ օղակ՝ գիտակցության և լեզվական առկայացման միջև [Амирова, Ольховиков, Рождественский, 1975: 346-347]:

Ներկայացնենք առածային / ասացվածքային համաբանության միջոցով թարգմանված մի շարք առածա-ասացվածքային միավորների օրինակներ՝

The leopard cannot change his spots. – Կարմիր կովն իր կաշին չի փոխի:

Every dog has his day. – Էշ մի սատկիր, գարուն կգա, յոնջա (առվույտ) կուտես:

Little thieves are hanged, but great ones escape. – Գայլը տուն է քանդում, աղվեսի անունն է դուրս եկել:

Don't teach your grandmother to suck eggs. – Չկանը լողալ չեն սովորեցնի:

Many hands make light work. – Մեջք մեջքի որ տանք, սարեր շուռ կտանք:

Գրականության մեջ նշվում է այն փաստը, որ եթե առածա-ասացվածքային միավորը թարգմանության լեզվում չունի իր համարժեքը, ապա տեղի է ունենում դիպվածային պատճենման միջոցով կատարվող թարգմանություն, որը սահմանվում է որպես մի լեզվի բառերի մեխանիկական փոխարինումը մի ուրիշ լեզվի բառային համարժեքներով՝ թարգմանության լեզվում բնագրի կառուցվածքն ամբողջությամբ կամ մասնակի պահպանելով հանդերձ [Նազարյան,

Բաղդասարյան, 2000:237]: Բառացի թարգմանությունը ճշգրիտ կերպով վերարտադրում է ոչ միայն բնագրի իմաստային բովանդակությունը, նրա ոճական, գործաբանական արժեքը և ներքին ձևը, այլև նրա քերականական, այդ թվում շարահյուսական կառուցվածքը:

Ներկայացնենք դիպվածային պատճենման միջոցով թարգմանված մի շարք առածա-ասացվածքային միավորների օրինակներ՝

After rain comes fair weather. – Անձրևից հետո արևոտ եղանակ է գալիս:

All cats are grey in the dark. – Մթության մեջ բոլոր կատուներն էլ գորշ են:

Brevity is the soul of wit. – Հակիրճությունը սրամտության ոգին է:

Eagles do not catch flies. – Արծիվները ճանճ չեն բռնում:

My house is my castle. – Իմ տունը իմ ամրոցն է:

Խոսելով դիպվածային պատճենման մասին՝ հարկ ենք համարում նշել, որ պրոֆ. Նազարյանն առանձնացնում է պատճենման ևս մի տեսակ, որը նա անվանում է սովորական պատճենում: Լեզվաբանը նշում է, որ դիպվածային պատճենումը և սովորական պատճենումը թարգմանության տարբեր եղանակներ են:

Իրականում Ա. Նազարյանն առաջինն է, որ ներմուծել է թարգմանության այս եղանակը առածներ և ասացվածքներ թարգմանելիս՝ հստակորեն տարբերելով դիպվածային պատճենումը սովորական պատճենումից [Նազարյան, Բաղդասարյան, 2000:277]: Սովորական պատճենման միջոցով թարգմանվող առածա-ասացվածքային միավորները փոխառնված են որպես պատճենում և թարգմանվում են բառացի և թարգմանության լեզվում դառնում բառային կազմի տարր: Այսպիսի առածա-ասացվածքային միավորը յուրացվում է թարգմանության լեզվի կողմից:

Ըստ լեզվաբանի դիպվածային պատճենման դեպքում թարգմանված միավորները թարգմանության լեզվում ամրագրված և հաստատուն, ինչպես նաև ավանդորեն ընդունված միավորների կարգավիճակ չունեն, մինչդեռ սովորական

պատճենումը հնարավորություն է ընձեռում թարգմանել տրված առածա-ասացվածքային միավորը՝ օգտագործելով այնպիսի լեզվական միավորներ, որոնք ընդունվում են հասարակության կողմից՝ շնորհիվ իրենց ճանաչված լինելուն:

Ներկայացնենք սովորական պատճենման միջոցով թարգմանված մի շարք առածա-ասացվածքային միավորների օրինակներ՝

Might goes before right. – Ուժն իրավունքից վեր է:

Never do things by halves. – Մի գործը երբեք կիսատ մի՛ անի:

Appetite comes with eating. – Ախորժակն ուտելիս է բացվում:

Whom God would ruin, he first deprives of reason. – Ում Աստված ուզում է կործանել, նախ նրա խելքն է առնում:

There is no little enemy. – Փոքր թշնամի չի լինում:

Walls have ears. – Պատերն էլ ականջ ունեն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երբ առածա-ասացվածքային միավորների թարգմանության ժամանակ թարգմանիչը դիմում է նկարագրական թարգմանությանը, ապա նա այդ եղանակով վերարտադրում է առածա-ասացվածքային միավորի իմաստն ազատ բառակապակցությունների միջոցով [Նազարյան, Բաղդասարյան, 2000: 245; Комиссаров, Рецкер, Тархов, 1960: 60]:

Փաստորեն առածա-ասացվածքային միավորի ընդհանուր բովանդակությունը մեկ այլ լեզվով այնպես է վերարտադրվում, ինչպես թարգմանիչն է ընկալում, և շատ հաճախ բնագրի և թարգմանության լեզուների միջև ձևական և գործառական-ոճական համապատասխանությունները չեն պահպանվում: Հայտնի իրողություն է, որ նկարագրական կերպով առավել հաճախ թարգմանվում են անհամարժեք բառերը, որոնք արտահայտում են ազգային իրակություններ: Դրանից կարելի է այն հետևությունն անել, որ թարգմանության լեզվում լեզվական միավորների համարժեքների բացակայությունն է, որ այդ միավորները նկարագրական կերպով թարգմանելու անհրաժեշտություն է առաջացնում, որն էլ իր հերթին պայմանավորված է այն փաստով, որ առածա-ասացվածքա-

յին միավորների շատ բառեր արտահայտում են լայն, ծավալուն հասկացություններ, և եթե թարգմանիչը չդիմի նկարագրական թարգմանությանը, ապա այդ լեզվական միավորների իմաստը թարգմանության լեզվում կարող է մասնատված ձևով հաղորդվել:

Գրականության մեջ նշվում է նաև, որ բացի այդ, որևէ բառի կամ բառակապակցության բովանդակության վերարտադրությունը բառերի ավելի մեծ քանակությամբ չի կարելի նրա իմաստի նկարագրությունը համարել, եթե դա կատարվում է համարժեքների միջոցով, այսինքն՝ միջլեզվական մշտական համապատասխանությունների միջոցով, որոնք համատեքստից կախված չեն և կառուցվածքային որոշ կայունություն ունեն: Հայտնի է, որ այն բառակապակցությունները, որոնց միջոցով համապատասխան առածա-ասացվածքային միավորները թարգմանվում են, թարգմանության լեզվում չունեն հաստատուն դարձվածային միավորների կարգավիճակ: Ավելին՝ իմաստային և շարահյուսական առումով այդ ազատ բառակապակցությունները տարրալուծելի են [Նազարյան, Բաղդասարյան, 2000: 245; Комиссаров, Рецкер, Тархов, 1960: 60]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ նկարագրական եղանակով թարգմանված առածա-ասացվածքային միավորները զուրկ են ելակետային լեզվի հաղորդակցական դարձվածային միավորների պատկերավորությունից և չեն կարող համարվել հաստատուն և անփոփոխ լեզվական միավորներ թարգմանության լեզվում:

Ներկայացնենք նկարագրական եղանակով թարգմանված մի շարք առածա-ասացվածքային միավորների օրինակներ՝

The way to a man's heart is through his stomach. – Տղամարդու սերը վաստակելու համար կինը պետք է նրան լավ և համեղ կերակուրներ կերցնի:

Between two stools one falls to the ground. – Ով որ ընտրության մեջ տատանվում է, կարող է ընձեռված բոլոր հնարավորությունները բաց թողնել:

Little pitchers have long ears. – Երեխաները սիրում են մեծերի խոսակցություններին ականջ դնել:

No cross, no crown. – Առանց ջանք թափելու և չարչարվելու ոչ մի գործ հաջողությամբ չի պսակվի:

There are more ways to the wood than one. – Նպատակին հասնելու համար բազմաթիվ ճանապարհներ և հնարավորություններ կան:

Ա. Կունինը, Վ. Կոմիսարովը, ինչպես նաև Ա. Ֆիտերմանը առաջարկել են առածա-ասացվածքային միավորների թարգմանության ևս մեկ եղանակ, որը պակաս հետաքրքրության արժանի չէ: Դա հականիշային թարգմանությունն է, որի միջոցով ժխտական նախադասության կառուցվածք ունեցող առածա-ասացվածքային միավորը վերարտադրվում է հաստատական նախադասության միջոցով և հակառակը՝ հաստատական նախադասությունն էլ վերարտադրվում է ժխտական կառույցով [Кунин, 2005; Комиссаров, Рецкер, Тархов, 1960; Левицкая, Фитерман, 1976]:

Ներկայացնենք հականիշային թարգմանության եղանակով թարգմանված մի շարք առածա-ասացվածքային միավորների օրինակներ՝

Barking dogs seldom bite. – Հաչան շունը մարդ չի կծի:

Every cloud has a silver lining. – Չկա չարիք առանց բարիքի:

An open door may tempt a saint. – Դուռդ փակ պահիր, որ հարևանիդ գող չբռնես:

What is done by night, appears by day. – Աղբը ծյան տակ չի մնա:

Վ. Կոմիսարովը ներկայացրել է թարգմանության ևս մեկ եղանակ՝ համատեքստային փոխարինումը, որը նաև կիրառվում է առածա-ասացվածքային միավորների թարգմանության ժամանակ [Комиссаров, Рецкер, Тархов, 1960: 61]:

Լեզվաբանի հավաստմամբ՝ երբ թարգմանիչը նպատակադրվում է հաղորդել առածա-ասացվածքային միավորի ոչ միայն իմաստային բովանդակության ճշգրիտ թարգմանությունը, այլ նաև նրա արտահայտչա-ոճական երանգավորումը՝ միևնույն ժամանակ չունենալով ո՛չ զուգահեռ համարժեք,

ո՛չ էլ համաբանություն, փորձում է գտնել համատեքստային փոխարինում:

Տվյալ պարագայում թարգմանիչը փորձում է թարգմանության լեզվում գտնել այնպիսի առածա-ասացվածքային միավոր, որը, չնայած իր իմաստով չի համապատասխանում առանձին վերցրած ելակետային լեզվի առածա-ասացվածքային միավորին, բավականին ստույգ է փոխանցում բովանդակությունը տվյալ համատեքստում: Այս դեպքում ելակետային դարձվածային միավորի թարգմանության մի շարք տարբերակներ կարող են առաջարկվել, իսկ ելակետային և թարգմանության տեքստի համարժեքությունը որոշվում է ավելի լայն համատեքստով, այնպես որ թարգմանության օպտիմալ տարբերակի ընտրությունը կախված է թարգմանչից, նրա տաղանդից և անհատական ճաշակից: Մեջբերենք լեզվաբանի կողմից բերված օրինակը՝ այն համեմատելով հայերենի հետ: "You can't eat your cake and have it" անգլերեն առածա-ասացվածքային միավորը հայերենում չունի ո՛չ համարժեք, ո՛չ էլ համաբանություն, և թարգմանիչը այն թարգմանում է կա՛մ մեկնաբանության միջոցով, համաձայն որի վերը նշված առածը նշանակում է «չի կարելի իրար հակասող երկու բան անել» կա՛մ էլ դիմում է համատեքստային փոխարինմանը, որի փայլուն օրինակը կարող է ծառայել Թեկկերեյի վեպերից մեկը՝ «Սնափառության տոնավաճառը», որտեղ հերոսներից մեկն առաջարկություն է անում Բեկի Շարպին, բայց իմանալով, որ նա ամուսնացած է, բացականչում է՝ "you can't eat your cake and have it too" և թարգմանիչն էլ, ընկալելով տրված համատեքստը, թարգմանել է այս առածա-ասացվածքային միավորը հետևյալ ձևով՝ «Ի՞նչ կարելի է անել, եթե ես չեմ կարող ո՛չ համտեսել, ո՛չ էլ կիսել Ձեզ հետ Ձեր ամուսնության թխվածքը»՝ հաջողությամբ լուծելով խնդիրը՝ այդպիսով իսկ պահպանելով անգլերեն դարձվածքի պատկերավորությունը:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև թարգմանության ժամանակ ազգամշակութային բաղադրիչի հաղորդման խնդրին: Ե. Վերեշչագինը և Վ. Կոստոմարովը բառի բովանդակային պլանում առանձնացնում են մի քանի իմաստային մասեր, որոնք բովանդակային պլանի համեմատաբար

ինքնուրույն և փոքր իմաստային միավորներ են: Նրանք տարբերակում են անհատական և սոցիալական իմաստային մասեր, իսկ վերջինս ստորաբաժանվում է միջլեզվական (համամարդկային ու եզերական) և ազգամշակութային իմաստային մասերի: Ազգամշակութային իմաստային մասերը ձևավորվում են որոշակի լեզվամշակութային համայնքի սահմաններում և արտացոլում նրա նյութական ու հոգևոր կյանքի առանձնահատկությունները, ազգային հոգեբանության ինքնատիպությունը [Верещагин, Костомаров, 1980]:

Համաձայն Հ. Բաղդասարյանի՝ թարգմանության ժամանակ ազգամշակութային բաղադրիչի հաղորդումը կապված է մեծ դժվարությունների հետ, որովհետև այն կախված է տվյալ լեզուն կրող ժողովրդի ազգային ինքնատիպությունն արտահայտող գործոններից, նրա պատկերավոր մտածողության առանձնահատկություններից:

Լեզվաբանը նշում է, որ ազգամշակութային բաղադրիչի հաղորդման ժամանակ պետք է հաշվի առնել ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները: Նա նշում է, «որ ազգամշակութային բաղադրիչը կապված է ոչ այնքան տեքստի յուրահատկությունների, որքան արտալեզվական գործոնների, ֆոնային գիտելիքների, ասույթի «ազգամշակութային» ենթատեքստի հետ: Իսկ ժողովրդի կյանքի առանձնահատկություններ ասելով մենք հասկանում ենք «ոչ այնքան իր տեսակի մեջ յուրօրինակ երևույթներ (օր.՝ ձյունը հյուսիսային և արևադարձային գոտու երկրներում), որքան տարբեր ժողովուրդների համար ընդհանուր երևույթներ, որոնք յուրովի են մեկնաբանվում լեզվական համայնքներում»: Լեզվաբանի հավաստմամբ ոչ միայն թարգմանվող լեզվի, այլ նաև թարգմանող լեզվի, հատկապես այդ լեզուն կրող ժողովրդի կյանքի առանձնահատկությունները նույնպես կարող են ներգործել թարգմանության վրա: Հետևաբար, թարգմանության ժամանակ առկա է երկկողմանի լեզվական և լեզվամշակութային փոխներթափանցում [Բաղդասարյան, 1996:35-36]: Լեզվաբանը շարունակում է զարգացնել իր միտքը՝ նշելով, որ թարգմանելիս առավել մեծ դժվարություն են ստեղծում տվյալ ժողովրդի մտածողության ազգային

01453-2

ԳՐԱԴԱՐԱՆ
<< «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան» ՊՈՒԱԿ

առանձնահատկությունները, նրա աշխարհընկալման յուրօրինակությունը:

Վերջին տարիներին թարգմանության որոշ տեսաբաններ (Լ. Լատիշև, Ե. Վերեշչագին, Վ. Կոստոմարով) ազգամշակութային բաղադրիչը քննում են որպես թարգմանաբանական տեսանկյունից լեզվական միավորի իմաստային բովանդակության կարևոր բաղկացուցիչ տարր [Верещагин, Костомаров, 1980; Латышев, 2003]:

Լ. Լատիշևը բառային իմաստի մեջ տարբերակում է «մշակութային բաղադրիչ», որին նա վերագրում է բոլոր տեսակի նշանակողական հարաշարանակությունները (սիգնիֆիկատիվ կոնոտացիաները).

ա) կայուն էթնիկական զուգորդումները,

բ) հուզական-գնահատողական բաղադրիչը (ոճական-արտահայտչական գունավորումը),

գ) հաղորդակցական-իրադրական բաղադրիչը (գործառական-ոճական և նորմատիվ-ոճական գունավորումը) [Латышев, 2003]:

Նշանակողական հարաշարանակությունները, ըստ Լ. Լատիշևի, արտացոլելով նշանակվողի օբյեկտիվ հատկանիշները, միաժամանակ ներառում են բովանդակային մի շարք հայեցակերպեր, որը պայմանավորված է տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմամշակութային ավանդույթներով, այդ թվում նաև սոցիալական որոշակի իրադրություններում լեզվական նշանի օգտագործման ավանդույթներով: Նշանակողական հարաշարանակությունները բովանդակում են նաև «պատրաստի» սուբյեկտիվ-գնահատողական տարրեր [Латышев, 2003]:

Լ. Լատիշևը, թարգմանությունը դիտարկելով որպես լեզվաէթնիկական վերահաղորդում /ռետրանսլացիա/, գրում է, որ «լիարժեք թարգմանության հնարավոր/անհնարին լինելու հարցը, այսպիսով, հիմնվում է ոչ միայն և ոչ այնքան թարգմանության ժամանակ թարգմանվող լեզվի նշանների իմաստների հաղորդման հնարավորության վրա, այլ ելակետային իմաստների /և կառույցների/ ձևափոխման օգնությամբ թարգմանվող և թարգմանող լեզուների նշանների գործառության պայմանների անհավասարությունը փոխհատուցելու

հնարավորության վրա, ներառյալ ազգային առանձնահատկություններով պայմանավորված անհավասարությունը արտալեզվական, այսինքն՝ լեզվական նշանների իմաստների մեջ անմիջականորեն չարտահայտված փորձում» [Латышев, 2003]:

Ուրեմն, թարգմանությունը միայն լեզվական նշակարգի պարզ փոխարինում չէ, այն նաև մշակութային հաղորդակցության ձև է, քանի որ «բնական լեզվի նշանները և մյուս նշանային համակարգերի նշանները գոյություն ունեն որոշակի մշակութային շրջապատում՝ յուրահատուկ ամեն մի լեզվամշակութային հանրույթի համար» [Сорокин, Марковина, 1988: 76-77]:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թարգմանության ինչպիսի՞ եղանակներով են թարգմանված հետևյալ անգլերեն առածա-ասացվածքային միավորները հայերեն:

Actions speak louder than words. – Խոսքը ասելը չէ՝ անելն է:
A cat may look at a king. – Կատուն էլ կարող է արքային նայել:
A close mouth catches no flies. – Բաց բերանը ճանճ կմտնի:
A good conscience is a soft pillow. – Խիղճը հանգիստ, քունը հանգիստ:
A honey tongue, a heart of gall. – Լեզուն մեղր, սիրտը՝ լեղի:
All is fish that comes to the net. – Ինչ որ ցանցն է ընկնում, ձուկ է:
All truths are not to be told. – Ճշմարտությունն աչք է ծակում:
As a man sows, so shall he reap. – Ինչ որ ցանես, էն էլ կհնձես:
Blood is thicker than water. – Արյունը ջուր չի դառնա:
Curiosity killed the cat. – Հետաքրքրությունը կատվին սպանել է:
Curses like chickens come home to roost. – Տուն քանդողի տունը Աստված կքանդի:
Dog does not eat dog. – Շունը շան թաթ չի կծի:
Don't sell the bear's skin before you've caught it. – Արջը չզարկած՝փոստը մի՛ ծախի:
Every bird likes its own nest. – Ամեն մարդ կասի՝ իմ ալյուրը ճերմակ է:
Every man is the architect of his own fortune. – Մարդու բախտն իր ձեռքին է:
Four eyes see more than two. – Մի խելքը լավ է, երկուսն ավելի:
Hares may pull dead lions by the beard. – Եզը որ ընկնի, դանակավորը կշատանա:
He that mischief hatches, mischief catches. – Ով ինչ անի, իրեն կանի:

Home is home though it be never so homely. – Հարազատ տանից լավ տեղ չկա:
Like mother, like daughter. – Մորը տես՝ աղջկան առ:
Make hay while the sun shines. – Երկաթը տաք – տաք կծեծեն:
One swallow does not make a summer. – Մի ծաղկով գարուն չի գա:
The dogs bark, but the caravan goes on. – Շունը կհաչի, քարավանը կանցնի:
The mouse that has but one hole is quickly taken. – Ամեն ինչ մի բախտախաղի չեն դնի:
We never know the value of water till the well is dry. – Ջրհորը ցամաքելուց հետո են միայն ջրի արժեքն իմանում:
Whom God would ruin, he first deprives of reason. – Աստված որ ուզում է մեկի տունը քանդել, առաջ խելքն է առնում:
You cannot judge a tree by its bark. – Արտաքինը խաբուսիկ է:

2. Թարգմանե՛ք հետևյալ առածա-ասացվածքային միավորները հայերեն՝ ընտրելով թարգմանության ամենահամապատասխան եղանակը:

A bad beginning makes a bad ending.
A constant guest is never welcome.
All is fair in love and war.
A fool may throw a stone into a well which a hundred wise men cannot pull out.
A fox is not taken twice in the same snare.
An apple a day keeps the doctor away.
Bad news has wings.
Better be born lucky than rich.
Children are poor men's riches.
Constant dropping wears away a stone.
Cut your coat according to your cloth.
The devil is not so black as he is painted.
Don't look a gift horse in the mouth.
Don't wash your dirty linen in public.

Eat and drink with friends but not trade with them.
Faint heart never won fair lady.
Give him an inch and he'll take an ell.
God helps those who help themselves.
Habit is a second nature.
He laughs best who laughs last.
Honey catches more flies than vinegar.
If a donkey bray at you, don't bray at him.
It is never too late to learn.
It is no use crying over spilt milk.
Life is not all beer and skittles.
Measure thrice and cut once.
Necessity is the mother of invention.
Out of sight, out of mind.
Stretch your legs according to the coverlet.
The grass is always greener on the other side of the fence.
There is no rose without a thorn.
Words cut more than swords.
You cannot make an omelet without breaking eggs.

3. Համապատասխանեցրե՛ք անգլերեն առածա-ասացվածքային միավորները հայերեն առածա-ասացվածքային միավորների հետ:

1. After rain comes fair weather.	ա. Կոշկարարի կոշիկը ծակ կլինի:
2. Beauty is only skin-deep.	բ. Չի եղել գիշեր, որ չլուսացա:
3. Birds of a feather flock together.	գ. Գործը չարչարանքին չարժե:
4. The cobbler's wife is the worst shod.	դ. Սիրուն երեսին փլավ չեն ուտում:
5. Empty vessels make the greatest sound.	ե. Անցածն անցած է:

6. The game is not worth the candle.	զ. Նմանը նմանին է գտնում:
7. Still waters run deep.	է. Դատարկ սայլը շատ ձայն կհանի:
8. Homer sometimes nods.	ը. Սեպը սեպով են հանում:
9. Let bygones be bygones.	թ. Մարմանդ ջրից վախեցիր:
10. One nail drives out another.	ժ. Իմաստունն էլ սխալական է:

4. Բառարանների օգնությամբ գտե՛ք հետևյալ անգլերեն առածա-ասացվածքային միավորների հոմանիշները և թարգմանե՛ք հայերեն:

A bird is known by his note, and a man by his talk.
Better be the head of a dog than the tail of a lion.
Birds of a feather flock together.
Diamond cut diamond.
Everything is good in its season.
He that is born to be hanged shall never be drowned.
Look before you leap.
The last drop makes the cup run over.
Two heads are better than one.
Slow and steady wins the race.
So many men, so many minds.
It is not the gay coat that makes the gentleman.
Half a loaf is better than no bread.
Great talkers are little doers.
The habit does not make the monk.

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՌԱԾԱ-ԱՍԱՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԿԱՅԱՑՈՒՄԸ ԲՆԱԳՐՈՒՄ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ձեռնարկի այս բաժնի նպատակն է ուսանողներին ուսուցանել ժամանակակից անգլերենի առածա-ասացվածքային միավորների առկայացման (գեղարվեստական տեքստերում գործածության) և թարգմանության տեքստում համապատասխան լեզվական կառույցների համարժեքության գործառական առանձնահատկությունները:

Հետազոտության ենթարկելով XX դարի անգլերեն գրական երկերից և համապատասխան թարգմանություններից վերցրած շուրջ 1500 գործածություն՝ ներկայացնենք բնագրում և թարգմանության տեքստում առկայացած առածա-ասացվածքային միավորների ութ խմբեր, որոնք կզարգացնեն ուսանողների՝ գեղարվեստական ստեղծագործություններում առկայացած անգլերենի առածա-ասացվածքային միավորներն ինքնուրույն վերլուծելու և հնարավորինս համարժեք հայերեն թարգմանելու հմտությունները: Դասդասման համար ելակետային է համարվում փոխակերպման սկզբունքը, քանի որ առկայացող ԱԱՄ-ի ամեն մի փոփոխություն (բառային, ձևաբանական, շարահյուսական և այլն) կամ անփոփոխ տարբերակ (լեզվական կաղապարի տեսքով) պայմանավորված է որոշակի իմաստագործառական և ոճագործաբանական միտումներով:

I խումբ — ԱԱՄ-ները փոխակերպման չեն ենթարկվում ոչ բնագրում, ոչ էլ թարգմանության տեքստում և հանդես են գալիս լեզվական կաղապարի տեսքով:

Դիտարկենք հետևյալ օրինակը՝

"Woman!" exclaimed the stranger, with energy, "when was I ever known to shrink from a duty? But "**judge not lest ye be judged,**" and fancy not that it is given to mortal eyes to fathom the intentions of the Deity" (J. Fennimore Cooper, The Spy, Chapter XXVIII, p. 325, 1975).

– Կի՛ն,– բացականչեց անծանոթը կորովով,– երբեք չի եղել, որ ես խուսափեմ իմ պարտականություններից: Սակայն՝ «մի դատիք և ոչ դատիցիք», և մի երևակայեք, թե մահկանացուն կարող է հասկանալ աստծո խորհուրդը (Ջեյմս Ֆենիմուր Կուպեր, Լրտեսը, Գլուխ XVIII, էջ 353, 1984):

Ինչպես տեսնում ենք, բնագրում (վերոնշյալ անգլերեն տեքստում) գործածված է "judge not lest ye be judged" ԱԱՄ-ը առանց որևէ փոխակերպման, լեզվական կաղապարի տեսքով: Թարգմանության մեջ ևս, առանց որևէ փոխակերպման գործածված է անգլերենի ԱԱՄ-ի հայերեն համարժեքը «մի դատիք և ոչ դատիցիք»: Անգլերենում և հայերենում համարժեք ԱԱՄ-ները աստվածաշնչյան ծագում ունեն և նրանց անփոխակերպ գործածությունը խոսքը դարձնում է ավելի ազդեցիկ, տպավորիչ, համոզիչ: Գործաբանական դիտավորության առումով, այս ԱԱՄ-ները տեքստում իրականացնում են անհերքելի ճշմարտություն պարունակող խորհուրդ տալու գործառույթ: Թե՛ բնագրի, թե՛ թարգմանության հեղինակները կարծես առաջնորդվել են այն թեզով, թե ինչպես աստվածային ճշմարտությունները ենթակա չեն «բեկման», այնպես էլ Աստվածաշնչից վերցրած՝ այդ ճշմարտություններն արծարծող ասույթները:

Հետաքրքրական է նշել այն փաստը, որ մեր հետազոտական նյութի շրջանակներում գրեթե բոլոր աստվածաշնչյան ծագում կամ բնույթ ունեցող ԱԱՄ-ները որևէ փոխակերպման չեն ենթարկվում թե՛ բնագրում, թե՛ թարգմանության մեջ: Սա մասամբ կարելի է բացատրել հոգեբանական այն գործոնով, թե աստվածաշնչյան ասույթները անհերքելի են, անմեկնելի, անժխտելի, «անձեռնմխելի»:

II խումբ — ԱԱՄ-ները բնագրում հանդես են գալիս լեզվական կաղապարի տեսքով, իսկ թարգմանության մեջ առկա են համարժեք ԱԱՄ-ների փոխակերպումներ:

Դիտարկենք հետևյալ օրինակը՝

"I've been seeing Irene," said Jolyon when the cab had started.

"Indeed!"

"You went to see her yesterday yourself, I understand."

"I did," said Soames; "she's my wife, you know."

The tone, the half-lifted sneering lip, roused sudden anger in Jolyon; but he subdued it.

"You ought to know the best," he said, "but if you want a divorce it is not very wise to go seeing her, is it? **One can't run with the hare and hunt with the hounds**" (J. Galsworthy, Book two, In Chancery, part one, ch. XIII, p. 95, 1975).

– Այրինի մոտից եմ գալիս,– ասաց Ջոլիոնը, երբ քեբը շարժվեց տեղից:

– Իսկապե՞ս:

– Իմացա, որ դուք ինքներդ երեկ գնացել եք նրան տեսնելու:

– Գնացի,– ասաց Սոմզը: – Նա իմ կինն է, գիտեք:

Նրա այդ ձայնի շեշտը, այդ հեգնական կիսաժպիտը անակնկալ զայրույթ բորբոքեցին Ջոլիոնի մեջ. բայց զսպեց զայրույթը:

– Չե՛ր գործն է, – ասաց, – բայց եթե ուզում եք ապահարզան ստանալ, հազիվ թե խոհեմություն լինի նրա մոտ գնալը, այնպես չէ՞: **Չի կարելի երկու նապաստակի ետևից ընկնել** (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը, հատոր II, «Ծուղակի մեջ», Մասն առաջին, Գլուխ XIII, էջ 133, 1977):

Բնագրում "One can't run with the hare and hunt with the hounds" ԱԱՄ-ը գործածված է առանց որևէ փոխակերպման, լեզվական կաղապարի տեսքով: Սակայն թարգմանիչը թարգմանության տեքստում փոխակերպել է «Երկու նապաստակի ետևից վազողը մեկն էլ չի բռնի» համարժեք ԱԱՄ-ը (որոշակի փոփոխության է ենթարկել բառակազմը, իմաստային կառուցվածքը, դիմավոր ձևը դարձել է անդեմ, նվազել են

նկարագրական տարրերը)՝ գերադասելով «Չի կարելի երկու նապաստակի ետևից ընկնել» տարբերակը:

Նշված բառա-քերականական փոխակերպումը ոչ թե նպատակ, այլ միջոց է՝ բացահայտելու ԱԱՄ-ի բովանդակային պլանի որոշ ներունակ իմաստույթներ: Այսպես «Երկու նապաստակի ետևից վազողը մեկն էլ չի բռնի» ԱԱՄ-ի ներունակ իմաստույթն է «Չի կարելի երկու նապաստակի ետևից ընկնել», որն էլ իր հերթին պարունակում է երկու գործ միաժամանակ չանելու հորդոր: Այս իմաստույթը (հորդորը) ձեռք է բերում գործաբանական մեծ արժեք ԱԱՄ-ի փոխակերպումից հետո: Ասենք նաև, որ փոխակերպումը նպաստել է նաև թարգմանության տեքստում բնագրի ԱԱՄ-ում առկա հեգնանքի վերարտադրությանը (Չի կարելի երկու նապաստակի ետևից ընկնել, այսինքն չի կարելի նպատակին հասնել միաժամանակ երկու իրարամերժ գործողություն կատարելու արդյունքում):

III խումբ — Բնագրում ԱԱՄ-ները փոխակերպման են ենթարկվում, սակայն թարգմանության տեքստում հայերեն համարժեք միավորը հանդես է գալիս լեզվական կաղապարի տեսքով:

Այս խմբում ներառվել են նշյալ երևույթի հետևյալ տարբերակները՝

ա) Բնագրում առկա է բառային փոխակերպում:

Օրինակ՝

Most true it is that "**beauty is in the eye of the gazer**." My master's colourless, olive face, square, massive brow broad and jetty eyebrows, deep eyes, strong features, firm grim mouth, - all energy, decision, will,-were not beautiful, according to the rule; but they were more than beautiful to me: they were full of an interest, an influence that quite mastered me,- that took my feelings from my own power and fettered them in his (Charlotte Bronte, Jane Eyre, Chapter 17, page 151, Copyright © 2000 The McGraw-Hill Companies).

Շատ ճիշտ է այն առածը, որ ասում է՝ «Սրտով սիրածը սիրուն կլինի»: Իմ տիրոջ դժգույն, դեղնականաչավուն դեմքը, լայն մեծ ճակատը, խոշոր, կուպրի պես սև հոնքերը, խոր ընկած աչքերը, ուժեղ դիմագծերը, համառ ու խիստ բերանը՝ էներգիայի ու վճռականության այդ մարմնավորումը, գեղեցիկ չէին, եթե հաշվի առնենք գեղեցկության սովորական կանոնները, բայց ինձ ավելի քան գեղեցիկ էին թվում, լի էին հետաքրքրությամբ և այնքան ազդեցիկ էին, որ տիրապետում էին ինձ, զրկում զգացմունքներիս վրա իշխանություն ունենալուց ու հանձնում էին դրանք նրա իշխանությանը (Շառլոթ Բրոնտե, Ջեյն Էյր, էջ 199, 1988):

Հեղինակը անգլերենի "beauty is in the eye of the beholder" ԱԱՄ-ի կաղապարված ձևում կատարել է բառային փոխակերպում՝ "beholder" բառը փոխարինելով "gazer" հոմանիշային իմաստ ունեցող բառով: "Beholder" և "gazer" հոմանիշային բառամիավորներն իրենց իմաստային կառուցվածքներում ունեն «տեսնել» ընդհանուր իմույթը, սակայն "gazer" բառի իմաստային կառուցվածքում առկա է նաև «սևեռուն, լարված, ակնապիշ նայելու» իմույթը: Այս հոմանիշով փոխարինելն էլ, իր հերթին, ողջ ասույթին հաղորդել է հուզարտահայտչական երանգ: Ընդհանուր առմամբ, ԱԱՄ-ի գործածությունը ասելիքը դարձրել է ավելի համոզիչ, քանի որ նրան հաջորդող շարադրանքում պարզաբանվում, հիմնավորվում է ասույթում բովանդակված գաղափարը. որն է՝ «սրտով սիրածը» ինչպիսի արատներ էլ ունենա, սիրեցյալի աչքին միշտ գեղեցիկ է երևում: Թարգմանիչը բավարարվել է անգլերենի ԱԱՄ-ի հայերեն համարժեքի լեզվական կաղապարով «սրտով սիրածը սիրուն կլինի» և բնագրում փոխակերպման արդյունքում ի հայտ եկած հուզարտահայտչական երանգը չի արտացոլվել թարգմանության տեքստում:

բ) Շատ հաճախ, փոխակերպության միջոցով հեղինակը տվյալ համատեքստում յուրովի մեկնաբանության է ենթարկում ԱԱՄ-ը, իսկ թարգմանության տեքստում առկա է համարժեքը՝ առանց որևէ փոփոխության: Դիտարկենք ասվածը ստորև բերված օրինակում՝

"It is our man—it is the Bohemian! If he attempts to cross the ford, he is a lost man—the water is up, and the ford impassable".

"Let him make that discovery himself, gossip," said the elder personage; "**it may, perchance, save a rope, and break a proverb**" (Walter Scott, Quentin Durward, Chapter II, p. 56, 1962).

– Դա հո մեր գնչուն է: Եթե նա փորձի մտնել ջրի հունը և անցնել, կորած է, ջուրը շատ է վարանել, և անցնելն անկարելի է:

– Թող փորձի,– պատասխանեց ավագը,– և ինքն էլ կհամոզվի դրանում: Գուցե նա կհաստատի հին առածը «Ով պիտի կախվելով մեռնի, չի խեղդվի ջրում» (Վալտեր Սքոթ, Քվենտին Դորվարդ, II Գլուխ, էջ 13, 1985):

Դժվար չէ նկատել, որ բնագրում "it may, perchance, save a rope, and break a proverb" նախադասությունն ակնարկում է "He that is born to be hanged shall never be drowned" ԱԱՄ-ը: Նման ակնարկ-նախադասությունն ասույթին հաղորդում է հեգնանքի իմաստույթ, ինչը թարգմանչին չի հաջողվել թարգմանության տեքստ ներմուծել, քանի որ «Ով պիտի կախվելով մեռնի, չի խեղդվի ջրում» համարժեք ԱԱՄ-ը զուրկ է այդ իմաստույթից:

Անգլերեն ԱԱՄ-ի նմանօրինակ փոխակերպումը վկայում է այն մասին, որ տվյալ ԱԱՄ-ը լայն տարածում ունի անգլախոս հանրությունում և հեռավոր ակնարկն անգամ բավական է, որ մտաբերվի համապատասխան ԱԱՄ-ը, ինչը չի կարելի ասել հայ լեզվամշակույթի համար: Եթե թարգմանիչը նույն կերպ վարվեր, ապա կարծում ենք, այն պարզապես անհասկանալի կլիներ հայ լեզվակրին. (հմմ...գուցե փրկի պարանը և խախտի առածը): Այս նկատառումից ելնելով՝ կարծում ենք, թարգմանիչը ճիշտ է վարվել՝ դիմելով ոչ թե

առածը ժխտելու, այլ հաստատելու ձևին (հմմ. Գուցե նա կհաստատի հին առածը...)՝ գործածելով համարժեք առածն առանց որևէ փոխակերպման:

IV խումբ — Ե՛վ բնագրում, և՛ թարգմանության տեքստում համարժեք ԱԱՄ-ները փոխակերպման են ենթարկված:

Այդ փոխակերպումները տարաբնույթ են և ոճագործաբանական առումով իրականացնում են տարբեր գործառույթներ:

Դիտարկենք հետևյալ օրինակը՝

It was a luxuriance of aspect, a fulness of growth, which made her appear more of a woman than she really was. She had inherited the feature from her mother without the quality it denoted. It had troubled her mind occasionally, till her companions had said that it was a fault which **time would cure** (Thomas Hardy, Tess of the D'Urbervilles, ch.5, p.50, 1950).

Աղջիկը գտնվում էր ծաղկման շրջանում, ուներ փարթամ արտաքին, որը նրան տալիս էր ավելի շուտ կնոջ տեսք: Իր այդ կողմը Տեսսը ժառանգել էր մորից: Դա նրան անհանգստացնում էր, բայց ընկերուհիներն ասացին, որ այդ թերությունը ժամանակը կբուժի (Թոմաս Հարդի, Տեսսը Դ' Էրբըրվիլների Տոհմից, Գլուխ V, էջ 43, 1983):

Բնագրում տեղի է ունեցել ԱԱՄ-ի բառաքերականական փոխակերպում:

"Time cures all things" ԱԱՄ-ի կաղապարված ձևից սղվել է "all things" կապակցությունը, բայի ներկա ժամանակին (cures) փոխարինել է ապառնի ժամանակը (would cure): Նույն կերպ է վարվել նաև թարգմանիչը, անշուշտ բնագրի ազդեցության տակ: «Ժամանակը բուժում է վերքերը» համարժեք ԱԱՄ-ի կաղապարված ձևից սղվել է «վերքեր» բառը, բայի ներկա ժամանակը դարձել է ապառնի (բուժում է—կբուժի):

Թե՛ անգլերենում, թե՛ հայերենում կատարված փոխակերպումներն ԱԱՄ-ները «հարմարեցում» են խոսակցական ոճին, շարահյուսորեն «ձուլում» են ասույթի տեքստային հյուսվածքին՝ վերածելով սովորական և ոչ կայուն բառակապակցության (time would cure–ժամանակը կբուժի): Այս երևույթը մենք պայմանականորեն անվանել ենք ԱԱՄ-ի ապակաղապարայնացում: Դիտարկենք նույն երևույթի դրսևորման մեկ այլ տարբերակ՝

In the boy, the Dartie and the Forsyte were struggling. For debts, drink, dancers, he had a certain sympathy; but the pearls–no! That was too much! And suddenly he found his mother's hand squeezing his.

"You see," he heard Soames say, "we can't have it all begin over again. There is a limit; **we must strike while the iron's hot**.

Val freed his hand.

"But–you're never going to bring out that about the pearls! I couldn't stand that–I simply couldn't!" (J. Galsworthy, Book Two, "In Chancery", Part One, Chapter IX, p. 68, 1975).

Տղայի մեջ Դարթին ու Ֆորսայթը պայքարում էին իրար դեմ: Պարտքեր, խմիչք, պարուհիներ՝ այնքան էլ դեմ չէր այս բաներին. բայց մարգարիտները՝ ոչ: Դա չափազանց է արդեն: Եվ հանկարծ զգաց, որ մայրը սեղմում է իր ձեռքը:

– Հասկանո՞ւմ ես,– լսեց նա Սոմզի ձայնը,– չենք կարող թույլ տալ, որ այդ ամբողջը նորից սկսվի: Չափ ու սահման կա. և պետք է երկաթը տաք-տաք ծեծենք:

Վելն ազատեց իր ձեռքը:

– Բայց...չպե՞տք է այդ մարգարիտների պատմությունը երբևից մեջտեղ հանենք: Ես չեմ կարող հանդուրժել դա. պարզապես չե՛մ կարող (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը, հատոր II, Ծուղակի մեջ, գլուխ IX, էջ 93, 1977):

Երկու տեքստերում էլ "Strike while the iron is hot" և «Երկաթը տաք-տաք կծեծեն» համարժեք ԱԱՄ-ները ապակաղապարայնացվել են՝ տեքստում ապահովելով շարահյուսական շարունակելիություն: Ապակաղապարայնացումը տեղի է ունեցել բայի դեմքի փոփոխության միջոցով և արդյունքում ԱԱՄ-ը դարձել է բարդ համադասական նախադասության անդամ՝ (There is a limit; we must strike while the iron's hot—Չափ ու սահման կա և պետք է երկաթը տաք-տաք ծեծենք): Նմանօրինակ փոխակերպումը հատուկ է խոսակցական ոճին և լեզվի կաղապարված կառույցները դարձնում է ասության փոփոխուն կազմավորումներ:

V խումբ — Բնագրում ԱԱՄ-ները գործածված են լեզվական կաղապարի տեսքով, իսկ համարժեք միավորը բացակայում է թարգմանող լեզվի համակարգում:

Լեզվական նման առնչությունների համատեքստում արձանագրել ենք մի շարք առանձնահատկություններ: Փորձենք դրանք դիտարկել հետևյալ օրինակում՝

"I didn't know whether she mightn't p'r'aps be out of sorts, you know, my dear, as she was the other night," replied the Jew.

At this confession, Miss Nancy burst into a loud laugh; and, swallowing a glass of brandy, shook her head with an air of defiance, and burst into sundry exclamations of "Keep the game a-going!" "**Never say die!**" and the like. These seemed to have the effect of re-assuring both gentlemen; for the Jew nodded his head with a satisfied air, and resumed his seat: as did Mr. Sikes likewise (Charles Dickens, The Adventures Of Oliver Twist, Chapter XIX, page 200, 1953).

– Ինձ թվում է՝ նրա տրամադրությունը այնքան էլ երաշխավորելի չէ. գուցե նախորդ գիշերվա նման նա դարձյալ ջղագրգռվի, սիրելի՛ս,– պատասխանեց Հրեան:

Այս խոստովանության վրա միսս Նենսին շռնդալից ծիծաղեց, կուլ տվեց մի բաժակ օղի և, գլուխը մարտահրավեր նետողի նման թափահարելով, զանազան բացականչություններ արավ. ինչպես, օրինակ, «խաղը համարձակ շարունակե՛ք», «**երբեք մի ընկճվե՛ք**» և այլն: Աղջկա այդ վարմունքը, ըստ երևույթին, երկու ջենթլմեններին էլ վստահություն ներշնչեց, քանի որ Հրեան, բավարարված, գլխով նշան արեց և կրկին գրավեց իր տեղը. նույնը արեց և միստր Սայքսը (Չարլզ Դիկկենս, Օլիվեր Թվիստի Արկածները, Տասնիններորդ Գլուխ, էջ 402, 1988):

Հեղինակի կողմից գործածված "Never say die" ԱԱՄ-ը հայերենում չունի իր համարժեքը: Նման պարագայում տրամաբանական է, որ թարգմանիչը ձգտի նախ և առաջ պահպանել բնագրի ԱԱՄ-ի արտահայտած գաղափարը (մի՛ վախեցիր, մի՛ հուսահատվիր, մի՛ ընկճվիր): Ինչպես տեսնում ենք, թարգմանիչը այդպես էլ վարվել է՝ ընտրելով «Երբեք մի՛ ընկճվեք» կառույցը: Թարգմանության տեքստում շեշտարկվել է անգլերենի ԱԱՄ-ի իմաստային կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ քաջալերելու իմաստույթը և պահպանվել է գաղափարական, գործաբանական համարժեքություն:

Դիտարկենք ևս մեկ օրինակ՝

"Who's firing?" said I.

"Drat that boy," interposed my sister, frowning at me over her work, "what a questioner he is. **Ask no questions, and you'll be told no lies.**"

It was not very polite to herself, I thought, to imply that I should be told lies by her, even if I did ask questions.

But she never was polite, unless there was company (Charles Dickens, Great Expectations, Chapter II, p. 17, 1949).

– Ո՞վ է կրակում,– հարցրի ես:

– Ա՛յ քեզ անտանելի տղա, – միջամտեց քույրս՝ ձեռագործից կտրվելով և արհամարհալից նայելով ինձ,–ի՛նչ

էլ հարցասերն է: Ով հարցեր կտա, սուտ պատասխաններ կստանա:

Մտածեցի, թե որքան անհարգալիր է քույրս ինքն իր հանդեպ. դուրս է գալիս, որ եթե երբևէ ես իրեն հարցեր տամ, ուրեմն միայն ստեր կլսեմ իրենից: Բայց նա երբեք էլ հարգալիր չի եղել, բացի հյուրեր ընդունելիս (Չարլզ Դիքենս, Մեծ Հույսեր, Գլուխ երկրորդ, էջ 14, 1983):

Թարգմանող լեզվի համակարգում համարժեքը չունեցող "Ask no questions, and you'll be told no lies" անգլերեն ԱԱՄ-ը բնագրում գործածված է առանց որևէ փոփոխության՝ լեզվական կաղապարի տեսքով: Տվյալ համատեքստում այս ԱԱՄ-ի արտահայտած գաղափարն է՝ «Ձուր հարցեր մի տուր. միևնույն է ճշմարտությունը չեմ կարող ասել. ստիպված պիտի ստեմ»: Ասության սուբյեկտի գործաբանական միտումը խնդրո առարկա ԱԱՄ-ին բացասական հավելիմաստ (կոնոտացիա) հաղորդելն է, որն ամրագրվում է երկխոսության մասնակցի հետևյալ խոսքերով «որքան անհարգալից է քույրս ինքն իր հանդեպ, դուրս է գալիս, որ եթե երբևէ ես իրեն հարցեր տամ, ուրեմն միայն ստեր կլսեմ իրենից»: Թարգմանիչը բնագրի ԱԱՄ-ը միաժամանակ և՛ թարգմանել է և՛ պարզաբանել: Թարգմանող լեզվի տեքստում տեղի է ունեցել անգլերեն ԱԱՄ-ի բայի եղանակի փոփոխություն. հրամայական եղանակը (իր խորհուրդ–հորդոր գործաբանական արժեքով) դարձել է պայմանական: Բայի եղանակային կարգի փոփոխությունը նպաստել է ասելիքի պարզաբանմանը, ավելի ճիշտ ձևավորել է պարզաբանումը՝ (Ով հարցեր կտա, սուտ պատասխաններ կստանա):

Ակնհայտ է, որ գրական տեքստերի թարգմանության ժամանակ թարգմանող լեզվի համակարգում բնագրի ԱԱՄ-ի համարժեք միավորի բացակայությունը թարգմանչի առջև դնում է դժվարագույն խնդիրներ՝ գաղափարի, ասույթի գործաբանական արժեքի, ոճական յուրակերպության և ասության սուբյեկտի դիտավորության պահպանման առումներով: Նման պարագայում, կարծում ենք, առաջնային պետք է համարել բնագրի ԱԱՄ-ի գաղափարական կողմի պահպանումը, որը երբեմն, եթե ոչ ամբողջապես, ապա մասամբ աղջատվում է:

VI խումբ — Բնագրում ԱԱՄ-ները գործածված են լեզվական կաղապարի տեսքով, իսկ թարգմանության տեքստում գործածված չեն թարգմանության լեզվի համակարգում գոյություն ունեցող համարժեքները:

Հարկ է նշել, որ այսպիսի դեպքերում, շատ հաճախ, դժվար է լինում մեկնաբանել թարգմանչի «ընտրությունը»: Քննության առնենք հետևյալ օրինակը՝

"Sir, I was too plain: I beg your pardon. I ought to have replied that it was not easy to give an impromptu answer to a question about appearances; that **tastes differ**; that beauty is of little consequence, or something of that sort."

"You ought to have replied no such thing. Beauty of little consequence, indeed! And so, under pretence of softening the previous outrage, of stroking and soothing me into placidity, you stick a sly penknife under my ear! Go on: what fault do you find with me, pray? I suppose I have all my limbs and all my features like any other man?" (Charlotte Bronte, Jane Eyre, Chapter 14, page 115, Copyright © 2000 The McGraw-Hill Companies).

– Սըր, չափից դուրս պարզ արտահայտվեցի: Ներեցե՛ք ինձ: Ես պետք է ասեի, որ միանգամից դժվար է հանպատրաստից պատասխանել արտաքինի հետ կապված հարցին, որ ճաշակները տարբեր են լինում, որ գեղեցկությունը առանձին նշանակություն չունի, կամ նման մի բան:

– Դուք չպետք է այդպես պատասխանեիք: Իրոք, գեղեցկությունը նշանակություն չունի: Եվ այսպես, ձեր առաջին վիրավորանքը մեղմելու, ինձ սփոփելու ու հանգստացնելու փոխարեն, դուք ինձ նորից եք խայթո՞ւմ: Խնդրեմ, շարունակեք, ի՞նչ թերություններ եք գտնում իմ մեջ: Ես ենթադրում եմ, որ ինձ մոտ ամեն ինչ տեղում է ինչպես

յուրաքանչյուր մարդու մոտ (Շառլոթ Բրոնտե, Ջեյն էյր, Գլուխ Տասնչորսերորդ, էջ 149, 1988).

Նախ ասենք, որ բնագրում "tastes differ" ԱԱՄ-ի կաղապարված կառույցի անփոխակերպ գործածությունն ունի ասույթի հիմնավորման գործաբանական արժեք: Նրա հայերեն համարժեքն է «ճաշակին ընկեր չկա» ԱԱՄ-ը, սակայն թարգմանիչը նախընտրել է մեկնաբանել ԱԱՄ-ում արծարծված գաղափարը («ճաշակները տարբեր են լինում»): Կարծում ենք, թարգմանչի կողմից հայերեն համարժեք միավորը չգործածելը ասույթը զրկել է բանավոր խոսքին հատուկ ոճական առանձնահատկությունից: «Ճաշակին ընկեր չկա» ԱԱՄ-ը հայ լեզվական իրականության մեջ, մասնավորապես բանավոր խոսքում, աչքի է ընկնում գործածության մեծ հաճախակիությամբ: Այսպիսով խախտվել է թարգմանության ոճական համարժեքության սկզբունքը: Ասենք նաև, որ թարգմանության տեքստում բնագրի ԱԱՄ-ին համապատասխան ԱԱՄ չգործածելն արդեն վկայում է ոճական բազմազանության նվազեցման մասին: Այդուհանդերձ, միանշանակորեն ասել, թե բոլոր դեպքերում թարգմանության տեքստում համարժեք ԱԱՄ չգործածելը խախտում է համարժեքության այս կամ այն սկզբունքը (տվյալ դեպքում ոճական) ճիշտ չէ, քանի որ առեկվատ համատեքստի կիրառումը երբեմն լրացնում է այդ բացը: Ուստի կարող է տեղի ունենալ հակառակ երևույթը՝ համարժեք ԱԱՄ-ի փոխակերպումը տվյալ համատեքստում ոճական առումով կարող է լինել առավել ընդունելի:

Հարկ է նշել, որ հաճախ թարգմանիչները կարող են անուշադրության մատնել թարգմանող լեզվում հաճախակի գործածվող համարժեք ԱԱՄ-ը: Ասածն ավելի հիմնավոր դարձնելու համար մեջբերենք միևնույն ԱԱՄ-ի թարգմանության օրինակներ՝ կատարված տարբեր թարգմանիչների կողմից:

1) Confound these civilities! I continually forget them. Nor do I particularly affect simple-minded old ladies. By-the-by,

I must have mine in mind; it won't do to neglect her; she is a Fairfax, or wed to one; and **blood is said to be thicker than water** (Charlotte Bronte, Jane Eyre, Chapter 14, page 114, Copyright © 2000 The McGraw-Hill Companies).

– Սատանան տանի այս քաղաքավարությունները: Ես շարունակ մոռանում եմ դրանք: Առանձին հարգանք չեմ տածում և պարզամիտ ծեր կանանց հանդեպ: Սակայն կարծիքս ես պետք է ինձ պահեմ, չեմ կարող նրան բանի տեղ չդնել, նա Ֆեյրֆաքս ազգանունն է կրում, կամ ամուսնացած է եղել Ֆեյրֆաքսի հետ: Ճիշտ են ասում, որ **արյունն ավելի թանձր է, քան ջուրը** (Շառլոթ Բրոնտե, Ջեյն էյր, էջ 147, 1988):

2) Something beyond the power of word-analysis bound them together, something hidden deep in the fibre of nations and families — for **blood**, they say, **is thicker than water** — and neither of them was a cold-blooded man (J. Galsworthy, Book One, The man of property, Part One, Chapter VI, p. 93, 1974).

Նրանց կապում էր մի բան, որ խոսքերով չի կարելի վերլուծել, մի բան, որ թաքնված է ազգերի ու ընտանիքների էության խորքում. չէ՞ որ **արյունը**, ինչպես ասում են, **ջրից թանձր է**. և ո՛չ հայրն էր սառնարյուն մարդ, ո՛չ էլ որդին (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը, Սեփականատերը, Մասն Առաջին, Գլուխ VI, էջ 104, 1975):

Ինչպես տեսնում ենք, երկու բնագիր տեքստերում էլ գործածված է "Blood is thicker than water" ԱԱՄ-ը, և տարբեր թարգմանիչների կողմից թարգմանված տեքստերում էլ առկա են բնագրային ԱԱՄ-ի ներքին ձևը պատճենող նմանօրինակ կառույցներ: Իհարկե, դժվար է բացատրություն գտնել այն բանին, թե ինչ սկզբունքներով են առաջնորդվել թարգմանիչները՝ իրենց տեսադաշտից դուրս թողնելով այնպիսի մի խիստ գործածական համարժեք ԱԱՄ, ինչպիսին «Արյունը ջուր չի դառնա» ԱԱՄ-ն է: «Արյունը ջրից թանձր է» հայ լեզվամշակույթի համար ոչինչ չասող կապակցություն է:

Տարբեր ժամանակներում, տարբեր ստեղծագործություններում, տարբեր թարգմանիչների կողմից թույլ տրված նույն «սխալը» վկայում է այն մասին, որ թարգմանության գործընթացի ժամանակ, լեզվահոգեբանական տեսանկյունից, մեծ է բնագրային ԱԱՄ-ների ներքին ձևի ազդեցությունը: Այլապես դժվար է բացատրել, թե ինչպես թարգմանիչը կարող է մոռացության մատնել մայրենի լեզվի բացահայտ համարժեքը:

VII խումբ — Բնագրում ԱԱՄ-ները փոխակերպված են, թարգմանության տեքստում գործածված չեն թարգմանող լեզվի համակարգում գոյություն ունեցող համարժեքները:

Մեր՝ այս խմբի մեջ մտնող ԱԱՄ-ների դիտարկումը լուսաբանենք ստորև բերված օրինակով՝

The Gadfly shrugged his shoulders. "**All's fair in war,**" he said cooly. "Your Eminence objects to straps theoretically, from the Christian standpoint; but it is hardly fair to expect the colonel to see that. He, no doubt, would prefer not to try them on his own skin–which is j-j-just my case. But that is a matter of p-p-personal convenience. At this moment I am undermost–w-w-what would you have? It is very kind of Your Eminence, though, to call here; but perhaps that was done from the C-c-christian standpoint, too (E. L. Voynich, The Gadfly, Part Three, Chapter VI, page 283, 1953).

Բոռն ուսերը վեր քաշեց:

– **Պատերազմը պատերազմ է**,– խոսեց նա անտարբեր: – Ձերդ սրբազանությունը կ-կապանքները չի ընդունում տեսականորեն, քրիստոնեական հայեցակետից ելնելով, բայց դժվար է նույնը պահանջել գնդապետից: Նա, անկասկած, բնավ չէր ցանկանա իր սեփական մաշկի վրա զգալ այդ կապանքները, ի-ինչպես ես զգացի: Բայց դա զուտ ա-անձնական պատշաճության հարց է: Ինչ կարող ես անել: Ես պարտված եմ... Համենայն դեպս, ձերդ սրբազանություն, մեծ սիրալիություն էր ձեր կողմից, որ այցելեցիք ինձ (է. Վոյնիչ, Բոռ, Երրորդ Մաս, VI Գլուխ, էջ 336, 1984):

Նախ անդրադառնանք բնագրում անգլերեն ԱԱՄ-ի փոխակերպմանը: Սղվել է "All is fair in love and war" ԱԱՄ-ի "love" բառը: Նրա հայերեն համարժեքն է «սիրո և պատերազմի մեջ բոլոր միջոցները արդարացված են» ԱԱՄ-ը, սակայն թարգմանիչը նախընտրել է «Պատերազմը պատերազմ է» «կրկնավոր բարդությունը», որը հայերենի բանավոր խոսքին հատուկ կառույց է: Այստեղ ևս թարգմանիչը կրել է բնագիր տեքստի անմիջական ազդեցությունը: Այսպես, "love" բառի սղումով, կարծում ենք, հեղինակը ցանկացել է ուշադրության կենտրոն տեղափոխել «պատերազմ» երևույթը, և թարգմանիչը, «որսալով» հեղինակային այս դիտավորությունը, կիրառել է վերոնշյալ կառույցը: Կարևորն այն է, որ թարգմանության տեքստում պահպանվել է բնագրի ԱԱՄ-ի առաջադաս գործածության գործաբանական գործառույթը՝ հիմնավորել, համոզիչ դարձնել հետագա շարադրանքը (ԱԱՄ-ին հաջորդող տեքստի բովանդակությունը): Այդուհանդերձ, մենք գտնում ենք, որ համարժեք ԱԱՄ-ից խուսափելը, ամեն դեպքում, թարգմանության տեքստը զրկում է ոճական գունագեղությունից (եթե ոչ համարժեքությունից):

Հետաքրքրական է նշել այն փաստը, որ հաճախ թե՛ բնագրում, թե՛ թարգմանության տեքստում համարժեք ԱԱՄ-ների փոխարեն, տեղ են գտնում հեղինակային մեկնաբանություններ: Քննության առնենք ստորև բերված օրինակը՝

"There'll be no need of slings this time, anyway. There, there, you needn't look so doleful over it! Put your heels together and show how straight you can shoot. Before long there'll be more work cut out for you than you'll know how to get through, and **there's nothing like practice beforehand**" (E. L. Voynich, The Gadfly, Part Three, Chapter VII, page 301, 1953).

– Այս անգամ վիրակապի կարիք չի լինի: Դե, դե, ի՞նչ եք քթերդ կախել: Պինդ կացեք և ցույց տվեք, որ դիպուկ կրակել գիտեք: Շուտով այնքան գործ կլինի ձեզ համար, որ, չգիտեմ, կկարողանա՞ք գլուխ հանել: **Հարկավոր է նախօրոք**

վարժվել...(է. Վոյնիչ, Բոռ, երրորդ Մաս, VII Գլուխ, էջ 357, 1984):

Նկատելի է, որ "Practice makes perfect"– «Աշխատանքն է վարպետ դարձնում» համարժեք ԱԱՄ-ները համապատասխանաբար մեկնաբանվել են թե՛ բնագրում ("There's nothing like practice beforehand"), թե՛ թարգմանության տեքստում (հարկավոր է նախօրոք վարժվել): Բնագրում նշյալ ԱԱՄ-ը այնպես է «այլափոխվել», ձևով այնքան է հեռացել կաղապարից, որ վերջինից սերված լինելն անգամ դարձել է կասկածելի: Սակայն մեկ կարևոր փաստ «մատնում է» փոխակերպման ակունքը: "There's nothing like practice beforehand" ասույթը իմաստագործաբանական տեսանկյունից ոչ մի արժեք չէր ունենա, եթե չառնչվեր լեզվական հանրության կողմից արդեն իսկ ընդունված "Practice makes perfect" ԱԱՄ-ին: Թարգմանության իմաստաոճական համարժեքության տեսանկյունից, կարծում ենք ավելի նպատակահարմար կլիներ թարգմանության տեքստում ներառել «Աշխատանքն է վարպետ դարձնում» ԱԱՄ-ը: Անգլերեն տեքստում ԱԱՄ-ի փոխակերպումը մեկնաբանության ձևով, կարող է դիտարկվել որպես ոճական հնար՝ արտահայտած գաղափարն ուժգնացնելու համար: Թարգմանության տեքստում տեղի է ունեցել հակառակ պրոցեսը՝ թուլացել է ԱԱՄ-ում արծարծված գաղափարը: «Հարկավոր է նախօրոք վարժվել» արտահայտությունն իր իմաստային «ծանրաբեռնվածությամբ» ավելի «թեթև» է քան «Աշխատանքն է վարպետ դարձնում» ԱԱՄ-ը:

VIII խումբ — Բնագրում ԱԱՄ-ները փոխակերպված են, թարգմանող լեզվի համակարգում գոյություն չունեն համարժեք ԱԱՄ-ներ:

Թարգմանության համար առանձնակի դժվարություն են ներկայացնում այն դեպքերը, երբ, մի կողմից, թարգմանող լեզվի համակարգում գոյություն չունի բնագրի ԱԱՄ-ի համարժեք կառույցը, իսկ մյուս կողմից ԱԱՄ-ի կաղապարված կառույցը բնագրում փոխակերպման է ենթարկված: Խնդիրն է՛լ

ավելի է բարդանում, երբ բնագրի ԱԱՄ-ի ներքին ձևը (որի պատճենմանը հաճախ են դիմում թարգմանիչները) անըմբռնելի է հայ լեզվակրի համար:

Ասվածը լուսաբանենք հետևյալ օրինակով՝

"–Yes, I am a student of history, don't you remember? And what we students of history always learn is that the human being is a very complicated contraption and that they are not good or bad but are good and bad and the good comes out of bad and the bad out of good, and **the devil take the hindmost**" (Robert Penn Warren, All The King's Men, Chapter Six, p. 231, 1979).

– Այո, չէ որ ես պատմաբան եմ: Մի՞թե մոռացել ես: Իսկ պատմաբանին հարկ է իմանալ, որ մարդ ասածը բարդ բան է, որ նա լինում է ոչ լավ, ոչ վատ, այլ միաժամանակ և՛ լավ, և՛ վատ, ու սատանան ինքն էլ գլուխ չի հանի, թե ուր է վերջը, ուր՝ սկիզբը (Ռոբերտ Փեն Ուորեն, Արքայի Ամբողջ Թիկնազորը, Վեցերորդ գլուխ, էջ 384, 1976):

Բնագրում գործածված է մի ԱԱՄ, որը հայերենում չունի իր համարժեքը: Այս ԱԱՄ-ի արտահայտած գաղափարը հետևյալն է՝ «ամեն մարդ իր գլխի ճարն է տեսնում, և սատանան անգամ գլուխ չի հանում դրանից»: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում անգլերենի ԱԱՄ-ի ներքին ձևն անըմբռնելի է հայ լեզվակրին՝ "Everyone for himself and the devil take the hindmost".

Հայ լեզվամշակույթին անծանոթ այս կառույցը (իր ձևով և բովանդակությամբ) բավականին ընդունված և տարածված ԱԱՄ է անգլիական լեզվամշակույթում: Այդ մասին է վկայում այն փաստը, որ հեղինակը գործածել է տվյալ ԱԱՄ-ի կրճատված ձևը ("The devil take the hindmost")՝ ամբողջական կառույցի ընկալման ակնկալիքով: Թարգմանիչը բավարարվել է անգլերեն ԱԱՄ-ի սեփական մեկնաբանությամբ՝ գործածելով երկարաշունչ մի նախադասություն: Այսպիսով, այստեղ առկա է անգլերեն ԱԱՄ-ի ներքին ձևի պատճենում-մեկնա-

բանություն թարգմանության տեսակը: Այստեղ ավելորդ է խոսել ոճական համարժեքության մասին: Ինչ վերաբերում է գաղափարական համարժեքությանը, ապա կարծում ենք, այս առումով բավարար կլիներ նաև չկիրառված նախադասության համառոտ ձևը (հմմ. Մարդ արարածը բարդ բան է, նա լինում է ոչ լավ, ոչ վատ, ու սատանան ինքն էլ գլուխ չի հանի): Ավելացնենք նաև, որ նշյալ ԱԱՄ-ի գործածությամբ հիմնավորվում է ասույթի գաղափարական միտումը՝ կենսափիլիսոփայական խոհը:

Ինչպես տեսնում ենք, առածա-ասացվածքային միավորները պատրաստի լեզվական կաղապարներ լինելով հանդերձ, առկայանալիս, շատ հաճախ, որոշակի փոխակերպումների են ենթարկվում: Այդ փոխակերպումները, ինչպես տեսանք, ինքնանպատակ չեն, այլ միտված են լուծելու որոշակի իմաստագործառական և ոճագործաբանական խնդիրներ: Ակնհայտ դարձավ, որ թարգմանիչների համար խնդրո առարկա լեզվական կազմավորումները բավականին դժվարություններ են ներկայացնում թարգմանության համարժեքությունն ապահովելու տեսանկյունից: Թարգմանության տեսության մեթոդական հարուստ «զինանոցն» անգամ ի վիճակի չէ սպառիչ պատասխաններ տալու բոլոր այն դեպքերի համար, երբ մայրենի լեզվի համակարգում բացակայում են համարժեք առածա-ասացվածքային միավորները: Դա վկայում է այն մասին, որ թարգմանությունը ստեղծագործական պրոցես է:

Անդրադառնալով փոխակերպումներին՝ հարկ ենք համարում նշել, որ փոխակերպումները հիմնականում կրում են շարահյուսական, քերականական, բառային և բառաքերականական բնույթ:

Շարահյուսական փոխակերպման տեսանկյունից, բնագիր տեքստում տեղի է ունենում առածա-ասացվածքային միավորի անդամների սղում, կրճատում, խախտվում է կաղապարված շարակարգը՝ «միահյուսվելով» տեքստային հյուսվածքին, ինչը մենք անվանել ենք առածա-ասացվածքային միավորի ապակաղապարայնացում:

Քերականական փոխակերպման առումով, առածա-ասացվածքային միավորներում հաճախակի տեղի են ունե-

նում բայական անդամի դեմքի, թվի, եղանակի, ժամանակի փոփոխություններ:

Բառային փոխակերպումները հիմնականում հանդես են գալիս հոմանիշային փոփոխությունների ձևով:

Առածա-ասացվածքային միավորների բնագրային փոխակերպումների ոճագործաբանական հիմնական գործառույթներն են

- պատկերավորության ստեղծում
- հուզարտահայտչական երանգավորում
- հումորի, հեգնանքի արտահայտություն
- գաղափարական բովանդակության ուժգնացում
- համոզելու, հակազդելու, կոնկրետ գործողության մղելու միտում
- փաստարկում:

Թարգմանության տեսանկյունից, առածա-ասացվածքային միավորները մեծ դժվարություններ են առաջացնում հատկապես այն դեպքերում, երբ թարգմանող լեզվի համակարգում բացակայում են համարժեք առածա-ասացվածքային միավորները: Սակայն դժվար է որևէ բացատրություն գտնել այն դեպքերի համար, երբ թարգմանող լեզվի համակարգում առկա են համարժեք առածա-ասացվածքային միավորները, իսկ թարգմանիչը դիմել է այլևայլ միջոցների:

Համարժեք առածա-ասացվածքային միավորները չգործածելը թարգմանության տեքստը դարձնում է ոճապես աղքատ, գաղափարապես թերի: Համարժեք միավորների բացակայության պարագայում առածա-ասացվածքային միավորների թարգմանության տեքստում գործածության մեր կողմից արձանագրված հիմնական միջոցներն են՝

- ներքին ձևի պատճենում
- ներքին ձևի պատճենում–մեկնաբանություն
- մեկնաբանություն
- ազատ թարգմանություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համեմատական վերլուծության ենթարկե՛ք բնագրում և թարգմանության տեքստում առկայացած առածա-ասացվածքային միավորները:

"What be ye looking at?" asked a man who had not observed the incident.

"Ho-ho-ho!" laughed dark Car.

"Hee-hee-hee! laughed the tippling bride, as she steadied herself on the arm of her fond husband. "Heu-heu-heu! laughed dark Car's mother, stroking her moustache as she explained laconically: "**Out of the frying-pan into the fire!**" (Thomas Hardy, Tess of the d'Urbervilles, ch. X, p. 79, 1950).

– Ինչի՞ն եք նայում,– հարցրեց մի մարդ, որը պատահածը չէր նկատել: – Հո', հո', հո',– ծիծաղեց թուխ Քարը:

– Հի', հի', հի',– ծիծաղեց հարբած նորապսակը՝ հենվելով սիրած ամուսնու թևին:

– Հա', հա', հա',– ծիծաղեց թուխ Քարի մայրը և բեղիկները հարթելով՝ կարճ բացատրեց. – Ջրից դուրս եկավ, ջրհեղեղն ընկավ (Թոմաս Հարդի, Տեսսը Դ'Էրբըրվիլների տոհմից, Փուլ Առաջին, Գլուխ X, էջ 75, 1983):

***

Jolyon thought he might not have the chance of saying it after.

"Dad!" cried June, "you're hopeless."

"That", said Jolyon, "is a fact, but I wish to remain hopeless as long as possible. **I shall let sleeping dogs lie**, my child. They are quiet at present."

"That's not giving science a chance," cried June. "You've no idea how devoted Pondridge is. He puts his science

before everything" (J. Galsworthy, Book Three, "To Let", Part Two, Chapter II, p. 103, 1975).

Ջոլիոնն էլ կարծիք հայտնեց, թե փորձելուց հետո գուցե բոլորովին հնարավորություն չունենա որևէ բան ասելու:

– Պապ, – բացականչեց Ջունը,– դու անհուսալի մարդ ես:

– Դա այդպես է իհարկե, – ասաց Ջոլիոնը,– բայց ես ցանկանում եմ անհուսալի մնալ այնքան երկար, ինչքան հնարավոր է: Չեմ ուզում քնած շներին քար գցել, զավակս: Առայժմ ո՛չ հաչում են, ո՛չ էլ կծում:

– Դա նշանակում է փակել դռները գիտության առաջ,– գոչեց Ջունը:–Դու գաղափար անգամ չունես, թե Փոնդրիջը որքան նվիրված մարդ է: Նա իր գիտությունը ամեն բանից վեր է դասում (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը, հատոր III, «Վարձու է տրվում», Գլուխ II, Մասն երկրորդ, էջ 536, 1977):

***

June had flown out at him, or something; she was as touchy as she could be!

He would, however, let Timothy have a bit of his mind, and see if he would go on dropping hints! And **he would not let the grass grow under his feet** either, he would go there at once; and take very good care that he didn't have to go again on the same errand (J. Galsworthy, Book I, "The man of property", Part Two, Chapter VII, p. 177, 1974).

Ջունը երևի ընդհարվել է նրա հետ կամ այդպիսի մի բան. չէ՞ որ նա շատ դյուրաբորբոք աղջիկ է:

Դե լավ, ինքը ամեն ինչ ուղղակի կասի Թիմըթիի երեսին, և տեսնենք նա կշարունակի՞ այլևս այդպիսի ակնարկություններ անել: Եվ պետք է տաք-տաք ծեծել երկաքը. հենց հիմա ինքը անմիջապես կգնա այնտեղ և այնպես կանի, որ այլևս կարիք չունենա մի ուրիշ անգամ էլ գնալու նույն հարցով (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների

պատմությունը, Սեփականատերը, Մասն Երկրորդ, Գլուխ VII, էջ 228, 1975):

***

"You've no need to tell me; I know all about it," interrupted Mr Hopkins, waving his hand. "It's always the same, **meat today, banyan tomorrow** — no certainty; never a regular half-crown in your pocket, eh?" (James Greenwood, The True history of a Little Ragamuffin, Chapter XXXII, p. 225, Foreign Languages Publishing House, Moscow, 1954).

– Ջի՛մ Սիմ՞տ,– վրա բերեց իմ նոր տերը: – Հիանալի: Դե, ճիշտն ասա՛, Ջի՛մ. չնայած քո բախտին, ամեն անգամ հաջողակ չէիր լինում, այնպես չէ՞: Մի օր շատ էր լինում, մի օր փուչ: Միշտ չէ, որ գրպանումդ զնգում էին կեսքրոնանոցները, չէ՞ (Ջեմս Գրինվուդ, Փոքրիկ Շրջմոլիկը, Գլուխ XXV, էջ 212, 1964):

***

"I'm sorry to grieve you," pursued the widow, "but you are so young, and so little acquainted with men, I wished to put you on your guard. It is an old saying that "**all is not gold that glitters**"; and in this case I do fear there will be something found to be different to what either you or I expect."

"Why!–am I a monster?" I said: "is it impossible that Mr. Rochester should have a sincere affection for me?" (Charlotte Bronte, Jane Eyre, Chapter 24, page 231, Copyright © 2000 The McGraw-Hill Companies).

– Ցավում եմ, որ վշտացնում եմ ձեզ,– շարունակեց որբևայրի կինը,– բայց դուք շատ երիտասարդ եք և վատ եք ճանաչում մարդկանց, և ես ուզում եմ նախազգուշացնել ձեզ: Հին առածն ասում է. «Այն, ինչ փայլում է, դեռ ոսկի չէ»: Եվ

վախենում եմ, որ այս դեպքում էլ ամեն ինչ այնպես չի լինի, ինչպես ակնկալում ենք՝ դուք և ես:

– Ինչու՞: Մի՞թե ես հրեշ եմ,– հարցրի,– մի՞թե հնարավոր չէ, որ միստր Ռոչեսթերը անկեղծորեն սիրի ինձ (Շառլոթ Բրոնտե, Ջեյն Էյր, Գլուխ Քսանչորսերորդ, էջ 304, 1988).

***

"What! Singleton! God forbid! Bless me– is it George– poor little George?" exclaimed the surgeon, as he quickened his pace with evident concern, and hastened to the side of the bed. "He is alive, though, and **while there is life there is hope**. This is the first serious case I have had today, where the patient was not already dead (J. Fennimore Cooper, The Spy, Chapter VIII, p. 111, 1975).

– Ինչպե՞ս, Սի՞նգլթընը: Աստվա'ծ իմ: Դա ուրեմն Ջորջն է, խեղճ փոքրիկ Ջո՞րջը,– անկեղծ հուզմունքով բացականչեց բժիշկը և շտապեց հիվանդի մոտ: – Փառք աստուծո, կենդանի է: Իսկ քանի դեռ կյանքը չի մարել, հույս կա: Սա առաջին լուրջ վերք ստացած վիրավորն է այսօր, որին բերում են ինձ մոտ դեռ կենդանի (Ջեյմս Ֆենիմուր Կուպեր, Լրտեսը, Գլուխ ութերորդ, էջ 103, 1984):

***

As I sat in my usual nook, and looked at him with the light of the girandoles on the mantel-piece beaming full over him–for he occupied an armchair, drawn close to the fire, and kept shrinking still nearer, as if he were cold–I compared him with Mr. Rochester. I think the contrast could not be much greater between a sleek gander and a fierce falcon: between a meek sheep and the rough-coated keen-eyed dog, its guardian.

He had spoken of Mr. Rochester as an old friend. A curious friendship theirs must have been: a pointed illustration indeed, of the old adage that "**extremes meet**" (Charlotte Bronte, Jane Eyre, Chapter 18, page 165, Copyright © 2000 The McGraw-Hill Companies).

Նստած իմ սովորական անկյունում, բուխարու վերևը դրված շքեղ աշտանակների պայծառ լույսի տակ, դիտում էի նրան: Նա տեղավորվել էր կրակի մոտ դրված բազկաթոռի վրա և աշխատում էր ավելի ևս մոտենալ կրակին, կարծես մրսելիս լիներ: Համեմատում էի նրան միստր Ռոչեսթերի հետ: Թվում էր, թե նրանց միջև եղած հակադրությունը մեղմ սագի ու մոլեգնած բազեի, հեզ ոչխարի ու բրդոտ աչալուրջ շան՝ ոչխարի պահապանի միջև եղած հակադրությունից ավել չէր:

Նա ասաց, որ միստր Ռոչեսթերը իր հին բարեկամն է: Սակայն դա շատ տարօրինակ բարեկամություն էր՝ հին առածի ակնառու ապացույցը այն մասին, որ «**հակադրությունները բարեկամանում են**» (Շառլոթ Բրոնտե, Ջեյն Էյր, Գլուխ Տասնութերորդ, էջ 218, 1988).

***

"My dear," Martini said at last, "if there were any way on earth to undo a thing that is once done, it would be worth while to brood over our old mistakes; but as it is, **let the dead bury their dead.** It is a terrible story, but at least the poor lad is out of it now, and luckier than some of those that are left- the ones that are in exile and in prison" (E. L. Voynich, The Gadfly, Part Two, Chapter IV, page 128, 1953).

– Սիրելիս, – վերջապես խոսել սկսեց Մարտինին, – եթե մենք թեկուզ ամենափոքրիկ հնարավորությունն ունենայինք փոխելու այն, ինչ եղել է արդեն, այդ դեպքում արժեր գլուխ ջարդել հին սխալների վրա: Բայց քանի որ անհնար է դրանք ուղղել, ուրեմն **թող որ մեռելները թաղեն իրենց մեռելներին**: Դա սարսափելի պատմություն է: Ի դեպ, այդ դժբախտ երիտասարդը, թերևս, ավելի երջանիկ է ողջ մնացած շատ-շատերից, որոնք այժմ տառապում են բանտերում կամ աքսորում (է.Վոյնիչ, Բոռ, Երկրորդ Մաս, IV Գլուխ, էջ 166, 1984):

***

On this board thirsty strangers deposited their cups as they stood in the road and drank, and threw the dregs on the dusty ground to the pattern of Polynesia, and wished they could have a restful seat inside.

Thus the strangers. But there were also local customers who felt the same wish; and **where there is a will there is a way** (Thomas Hardy, Tess of the D'Urbervilles, Chapter 4, p. 32, 1950).

Ծարավ օտարականներն իրենց բաժակները շարում էին այդ տախտակին, խմում էին կանգնած, իսկ մնացորդները թափում էին փոշոտ գետնին, որի վրա առաջանում էին պոլենեզյան նախշեր, մինչդեռ նրանք կուզենային հանգիստ նստել ներսում:

Այդպիսին էր օտարականների վիճակը: Բայց կային նույն ցանկությունն ունեցող և տեղացի հաճախորդներ. իսկ **այնտեղ, որտեղ կա կամք, չկա արգելք** (Թոմաս Հարդի, Տեսը Դ'Էրբըրվիլների տոհմից, Փուլ Առաջին, Գլուխ IV, էջ 23, 1983):

***

Andrew reddened. There was nothing that he could say.

You want to be more careful, man", Urquhart went on in an altered tone. "Oh, I know, I know. You want to tear down the walls of Babylon–I was young myself once. But all the same, go slow go easy, **look before you leap**! Good night. My compliments to your wife."

With Urquhart's words sounding in his ear, Andrew made every effort to steer a cautious course. But, even so, a greater disaster immediately overtook him (A. J. Cronin, The Citadel, Part 2, chapter 5, p. 162, 1966).

Էնդրյուն կարմրեց և չգիտեր ինչ ասեր:

– Դուք պետք է ավելի շրջահայաց լինեք,–շարունակեց նա մի այլ տոնով: – Այո, գիտեմ, դուք ուզում եք կործանել Բաբելոնի պարիսպները... ինքս էլ մի ժամանակ երիտասարդ եմ եղել: Ինչևիցե, գործեք դանդաղ, մի'ք տաքանա, <u>նայեք, թե ուր եք թռչում</u>: Բարի գիշեր: Բարևեք ձեր կնոջը:

Այդ հանդիպումից հետո էրքիարթի բառերը շարունակ հնչում էին նրա ականջում, և նա գործադրում էր ամեն ջանք, որպեսզի զգույշ գործեր: Այնուամենայնիվ շուտով շատ ավելի մեծ տհաճություն պատահեց նրան (Արչիբալդ Կրոնին, Միջնաբերդ, Երկրորդ Մաս, Գլուխ 5, էջ 150, 1979):

***

"We are now without father: we shall soon be without home and brother," she murmured. At that moment a little accident supervened, which seemed decreed by fate, purposely to prove the truth of the adage, that "**misfortunes never come singly**:" and to add to their distresses the vexing one of the slip between the cup and the lip. St. John passed the window reading a letter. He entered.

"Our Uncle John is dead," said he. Both the sisters seemed struck: not shocked or appaled; the tidings appeared in their eyes rather momentous than afflicting (Charlotte Bronte, Jane Eyre, Chapter 30, page 312, Copyright © 2000 The Mcgraw-Hill Companies).

–Մենք մնացել ենք առանց հոր, շուտով ո՛չ տուն կունենանք և ո՛չ էլ եղբայր,–շշնջաց նա:

Նույն րոպեին կատարվեց մի փոքր դեպք, որը ճակատագիրը կարծես դիտավորյալ ուղարկել էր <u>«աղետը մենակ չի գալիս»</u> առածի ճշմարտությունը ապացուցելու, նրանց վշտերին նոր դառնություն ավելացնելու: Պատուհանի տակով անցնում էր Սենտ Ջոնը, որը կարդում էր ինչ-որ նամակ: Նա ներս մտավ սենյակ:

–Մեր քեռի Ջոնը վախճանվել է,–ասաց նա (Շառլոթ Բրոնտե, Ջեյն Էյր, Գլուխ երեսուներորդ, էջ 411, 1988):

***

Walking home towards Park Lane — for he was staying at his father's — with the impression of Annette's soft clever hand within his own, his thoughts were pleasant, slightly sensual, rather puzzled. Take steps! What steps? How? **<u>Dirty linen washed in public</u>?** Pah! With his reputation for sagacity, for far-sightedness and the clever extrication of others, he, who stood for proprietary interests, to become the play-thing of that Law of which he was a pillar! There was something revolting in the thought! Winifred's affair was bad enough! To have a double dose of publicity in the family! (J. Galsworthy, Book Two, "In Chancery", Part One, Chapter IV, p. 37, 1975).

Երբ ոտքով վերադառնում էր Պարկ Լեյն՝ հոր տունը, ուր մնում էր այս օրերս, Սոմզն իր ափի մեջ դեռ զգում էր Աննետի փափուկ, աշխույժ ձեռքը, և տարվել էր հաճելի, մի քիչ ցանկահարույց և բավական շփոթ մտքերով: Քայլերի դիմե՞լ: Ի՞նչ քայլերի: Ինչպե՞ս: <u>Հասարակության առաջ կեղտոտ շորե՞ր լվանալ</u>: Թուի! Խելամիտ, հեռատես, ուրիշներին հմտորեն փորձանքից ազատող մարդու իր համբավով, և լինելով սեփականատիրական շահերի պաշտպան, դառնալ խաղալի՞քն այն օրենքի, որի նեցուկն է հանդիսանում ինքը: Շատ վրդովեցուցիչ մի բան կա դրա մեջ: Ուինի ֆրիդի պատմությունն արդեն բավական զզվելի է: Կրկնակի՞ խայտառակվի իրենց ընտանիքը հասարակության

առաջ (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը, հատոր II, Ծուղակի մեջ, գլուխ IV, էջ 50, 1977):

***

"He has marked your poor face! Oh, George, what a brute you are! Nothing but scandals from one end of the week to the other. Everyone hating and making fun of you. You've finished my patience. This ends it."

"**Dirty linen,**" he rumbled.

"It's not a secret," she cried. "Do you suppose that the whole street–the whole of London, for that matter– Get away, Austin, we don't want you here (Arthur Conan Doyle, The Lost World, Chapter 4, page 21, 1974).

– Բայց նա ձեր աչքի տակը կապտացրել է: Ինչ խայտառակություն... Մեզ մոտ շաբաթ չի անցնում առանց սկանդալի: Ջո՛րջ, բոլորը քեզ ատում են, չարախնդում քեզ վրա: Ո՛չ, համբերությունս վերջացավ: Սա էլ արդեն բաժակս լցրեց:

– Կեղտոտ սպիտակեղենը մի՛ խառնշտորի մարդկանց մոտ,– թնդաց պրոֆեսորը:

– Ո՛չ ոքի համար այդ գաղտնիք չէ,– ճչաց կինը:– Մի՞թե դու կարծում ես, թե այս բաները մեր ամբողջ փողոցին, ինչ եմ ասում՝ ամբողջ Լոնդոնին հայտնի չեն... Օստին, դուք մեզ հարկավոր չեք, կարող եք գնալ (Արթուր Կոնան Դոյլ, Կորուսյալ Աշխարհի, Գլուխ IV, էջ 292, 1985):

***

The fact was–and he admitted it–Fleur was so much to him that his wife was very little– very little; French–had never been much more than a mistress, and he was getting indifferent to that side of things! It was odd how, with all this ingrained care for moderation and secure investment, **Soames ever put**

his emotional eggs into one basket. First Irene – now Fleur. He was dimly conscious of it, sitting there, conscious of its old dangerousness. It had brought him to wreck and scandal once, but now–now it should save him! He cared so much for Fleur that he would have no further scandal (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Three, "To Let", Part Two, Chapter VI, p.138, 1975).

Փաստը մնում էր փաստ, և Սոմզն ընդունում էր՝ Ֆլերը այնքան մեծ նշանակություն ունի իր համար, որ կինը շատ քիչ տեղ է գրավում իր սրտում, շատ քիչ. Ֆրանսուհի՝ նա միշտ էլ իր համար եղել է սիրուհու պես մի բան, իսկ այդ կողմից ինքը արդեն անտարբեր է դառնում հիմա: Տարօրինակ էր, որ Սոմզը, լինելով այնպիսի մարդ, որի համար միս ու արյուն էր դարձել չափավորությունը և դրամագլուխն ապահով ներդնելու ձգտումը, միշտ էլ <u>իր զգացմունքները ամբողջությամբ դնում էր միայն մի նժարի վրա</u>: Սկզբում Այրինը, այժմ՝ Ֆլերը: Եվ հիմա, տաղավարում նստած, տարտամորեն գիտակցում էր իր այդ տարօրինակ անձնվիրությունը, զգում էր նաև, թե որքան վտանգավոր է դա: Մի անգամ դա իրեն հասցրել էր խորտակման ու խայտառակության, բայց հիմա...հիմա դա իր փրկությունն է լինելու: Ֆլերը այնքան թանկ է իր համար, որ ինքը ոչ մի խայտառակություն թույլ չի տա այլևս կյանքում (Ջոն Գոլսուորդի, Ֆորսայթների պատմությունը, հատոր III, Վարձու է տրվում, Մասն երկրորդ, գլուխ VI, էջ 587, 1977):

***

"Can't you put some more steam in it? This is an election and not a meeting of the Epworth League."

"It is an election, all right."

"Can't you give it a little more?"

"When what you got to work with is Sam MacMurfee," I said, "**you haven't even got a sow's ear to make a silk purse**

out of. I'm doing what I can" (Robert Penn Warren, All The King's Men, Chapter Two, p. 103, 1979).

– Չէի՞ր կարող մի քիչ շոգի ավելացնել: Չէ որ սա ընտրություն է, այլ ոչ թե էփուորս Լիգայի ժողով:

– Ճիշտ է, ընտրություն է:

– Չէի՞ր կարող մի քիչ շոգի ավելացնել:

– Երբ ունեցածդ ընդամենը մի Սեմ Մաքմերֆի է,– ասացի ես,– ապա ձեռքիդ տակ նույնիսկ խոզի ականջ էլ չի լինում, որ ուռցնես, նրանից մետաքսյա բսակ սարքես: Ես անում եմ իմ կարելիը (Ռոբերտ Փեն Ուորեն, Արքայի Ամբողջ Թիկնազորը, Երկրորդ գլուխ, էջ 151, 1976):

***

"Mutiny, sir, mutiny," cried the other, laughing. "What, you, Tom Mason, dare to rival the gay, admired, and withal rich, Major Dunwoodie in his love! You, a lieutenant of cavalry, with but one horse, and he none of the best! whose captain is as tough as a pepperidge log, and **has as many lives as a a cat!**" (J. Fennimore Cooper, The Spy, Chapter IX, p. 122, 1975).

– Դա խռովություն է, սըր, խռովություն,– գոչեց կապիտանը ծիծաղելով:

– Ինչպե՞ս եք դուք, Թոմ Մեյսըն, համարձակվում մրցել զվարթ, պաշտված և միևնույն ժամանակ հարուստ մայոր Դանվուդիի հետ: Դուք, հեծելազորային լեյտենանտ, որը բացի ձիուց, այն էլ՝ ոչ լավագույններից, ոչինչ չունեք: Ուրիշ բան է ձեր կապիտանը. **ամուր է, ինչպես կաղնին, դիմացկուն, ինչպես կատուն** (Ջեյմս Ֆենիմուր Կուպեր, Լրտեսը, Գլուխ IX, էջ 115, 1984):

2. Թարգմանե՛ք բնագրում ընդգծված առածա-ասացվածքային միավորները հայերեն՝ ուշադրություն դարձնելով բնագրին հնարավորինս հավատարիմ մնալու սկզբունքին:

"Caesar," said Miss Peyton, "hand the gentleman some refreshment; he must need it after his ride."

"My strength is not in the things of this life," said the divine, speaking in a hollow, sepulchral voice. "Thrice have I this day held forth in my Master's service, and fainted not; still it is prudent to help this frail tenement of clay, for, surely, "**the laborer is worthy of his hire.**" (J. Fennimore Cooper, The Spy, Chapter XXVIII, p. 325, 1975).

***

The stranger turned a lowering look at the speaker, and then composing himself into an air of self-abasement, he continued in the same repelling tones, —

"It is not everyone that crieth out for mercy, that will be heard. The ways of Providence are not to be judged by men — **'Many are called, but few are chosen.**' It is easier to talk of humility than to feel it. Are you so humble, vile worm, as to wish to glorify God by your own damnation? If not, away with you for a publican and a Pharisee!" (J. Fennimore Cooper, The Spy, Chapter XXVIII, p. 326, 1975).

***

"Let the dead Past bury its dead" would be a better saying if the Past ever died. The persistence of the Past is one of those tragi-comic blessings which each new age denies, coming cock-sure on to the stage to mouth its claim to a perfect novelty. But no Age is so new as that! Human Nature, under its changing pretensions and clothes, is and ever will be very much of a Forsyte, and might, after all, be a much worse animal (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 22, 1974).

***

But in pitying Soames readers incline, perhaps, to animus against Irene. After all, they think, he wasn't a bad fellow, it wasn't his fault; she ought to have forgiven him, and so on! And, taking sides, they lose perception of the very simple truth, which underlies the whole story, that where sex attraction is utterly and definitely lacking in one partner to a union, no amount of pity, or reason, or duty, or what not, can overcome a repulsion implicit in Nature. Whether it ought to, or no, is beside the point, because in fact it never does. And where Irene seems hard and cruel – as in the Bois de Boulogne, or the Goupenor Gallery – she is but wisely realistic, knowing that **the least concession is the inch which precedes the impossible, the repulsive ell** (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 23, 1974).

***

"I shan't be able to give you very much," he had said, a formula to which June was not unaccustomed. "Perhaps this What's- his- name will provide the cocoa."

He had hardly seen anything of her since it began. A bad business! He had no notion of giving her a lot of money to enable a fellow he knew nothing about to live on in idleness. He had seen that sort of thing before; no good ever came of it. Worst of all, he had no hope of shaking her resolution; she was as obstinate as a mule, always had been from a child. He didn't see where it was to end. They **must cut their coat according to their cloth.** He would not give way till he saw young Bosinney with an income of his own (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 48, 1974).

***

He had forgotten the day when, adroitly taking advantage of an acute phase of her dislike to her home surroundings, he crowned his labours with success. If he remembered anything, it was the dainty capriciousness with which the gold-haired, dark-eyed girl had treated him. He certainly did not remember the look on her face – strange, passive, appealing – when suddenly one day she had yielded, and said that she would marry him.

It had been one of those real devoted wooings which books and people praise, when the lover is at length rewarded for **hammering the iron till it is malleable,** and all must be happy ever after as the wedding bells (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 75- 76, 1974).

***

"Pride comes before a fall!" In accordance with this, the greatest of Nature's ironies, the Forsyte family had gathered for a last proud pageant before they fell. Their faces to right and left, in single lines, were turned for the most part impassively toward the ground, guardians of their thoughts; but here and there, one looking upward, with a line between his brows, seemed to see some sight on the chapel walls too much for him, to be listening to something that appalled (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 120, 1974).

***

Flight! But why should Bosinney fly? A man fled when he was in danger of destroying hearth and home, when there were children, when he felt himself trampling down ideals, breaking

something. But here, so he had heard, it was all broken to his hand.

He himself had not fled, nor would he fly if it were all to come over again. Yet he had gone further than Bosinney, had broken up his own unhappy home, not someone else's. And the old saying came back to him: **"A man's fate lies in his own heart."**

In his own heart! **The proof of the pudding was in the eating** – Bosinney had still to eat his pudding (J.Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 213, 1974).

***

He intended to take an opportunity this afternoon of speaking to Irene. **A word in time saved nine;** and now that she was going to live in the country there was a chance for her to turn over a new leaf! He could see that Soames wouldn't stand very much more of her goings on!

It did not occur to him to define what he meant by her "goings on"; the expression was wide; vague, and suited to a Forsyte. And James had more than his common share of courage after lunch (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 229, 1974).

***

His memory went searching. He had not felt his age since he had bought his nephew Soames' ill-starred house and settled into it here at Robin Hill over three years ago. It was as if he had been getting younger every spring, living in the country with his son and his grandchildren–June, and the little ones of the second marriage, Jolly and Holly; living down here out of the racket of London and the cackle of Forsyte 'Change, free of his Boards, in

a delicious atmosphere of **no work and all play**, with plenty of occupation in the perfecting and mellowing of the house and its twenty acres, and in ministering to the whims of Holly and Jolly (J. Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 320, 1974).

***

"I should have liked you for a daughter", he said suddenly; and watching the smile in her eyes, went on:

"You mustn't get wrapped up in the past at your time of life; plenty of that when you get to my age. That's a nice dress – I like the style."

"I made it myself."

Ah! A woman who could make herself a pretty frock had not lost her interest in life.

"Make hay while the sun shines," he said; "and drink that up. I want to see some colour in your cheeks. We mustn't waste life; it doesn't do. There's a new Marguerite to-night; let's hope she won't be fat. And Mephisto – anything more dreadful than a fat chap playing the Devil I can't imagine." (J.Galsworthy, The Forsyte Saga, Book One, "The man of property", p. 350, 1974).

***

Nicholas was there early. He had seen Soames the night before – Soames had said it was bound to come. This old Kruger was in his dotage – why, he must be seventy-five if he was a day! (Nicholas was eighty-two.) What had Timothy said? He had had a fit after Majuba. These Boers were a grasping lot! The dark-haired Francie, who had arrived on his heels, with the contradictious touch which became the free spirit of a daughter of Roger, chimed in:

"Kettle and pot! Uncle Nicholas. What price the Uitlanders?" What price, indeed! A new expression, and believed to be due to her brother George (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Two, In Chancery", p. 87, 1975).

***

Jolly Forsyte was strolling down High Street, Oxford, on a November afternoon; Val Dartie was strolling up. Jolly had just changed out of boating flannels and was on his way **to the "Frying-pan,"** to which he had recently been elected. Val had just changed out of riding clothes and was on his way **to the fire** – a bookmaker's in Cornmarket.

"Hallo!" said Jolly.

"Hallo!" replied Val (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Two, In Chancery", p. 101, 1975).

***

"Hallo, Soames!" he said; "have a nose!"

Soames responded with a pale smile.

"Got this from one of these sportsmen," went on George, who had evidently been dining; "had to lay him out – for trying to bash my hat. I say, one of these days we shall have to fight these chaps, they're getting so damned cheeky – all radicals and socialists. They want our goods. You tell Uncle James that, it'll make him sleep."

'*In vino veritas*,' thought Soames, but he only nodded, and passed on up Hamilton Place. There was but a trickle of roysterers in Park Lane, not very noisy. And looking up at the houses he thought: 'After all, we're the backbone of the country. They won't upset us easily. **Possession's nine points of the law.**' (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Two, In Chancery", p. 186-187, 1975).

***

That evening, faithful to the impulse toward direct action, which made many people avoid her, she said to her father:

"Dad, I've been down to see young Fleur. I think she's very attractive. It's no good hiding our heads under our wings, is it?"

The startled Jolyon set down his barley-water, and began crumbling his bread.

"It's what you appear to be doing," he said. "Do you realise whose daughter she is?"

"Can't the dead past bury its dead?"

Jolyon rose.

"Certain things can never be buried." (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Three, "To Let", p. 108, 1975).

***

On the evening of July 6, Boris Strumolowsky – several of whose works were on show there because they were as yet too advanced to be on show anywhere else – had begun well, with that aloof and rather Christ-like silence which admirably suited his youthful, round, broad cheek-boned countenance framed in bright hair banged like a girl's. June had known him three weeks, and he still seemed to her the principal embodiment of genius, and hope of the future; a sort of Star of the East which had strayed into an unappreciative West. Until that evening he had conversationally confined himself to recording his impressions of the United States, **whose dust he had just shaken from off his feet** – a country, in his opinion, so barbarous in every way that he had sold practically nothing there, and become an object of suspicion to the police; a country, as he said, without a race of its own, without liberty, equality, or fraternity, without principles, traditions, taste,

without – in a word – a soul. (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Three, "To Let", p. 142-143, 1975).

***

Here, where he had passed that wonderful week with her – the tug of her enchantment, the ache in his heart increased with every minute that she was not there to make the room, the garden, the very air magical. Would he ever be able to live down here, not seeing her? And he closed up utterly, going early to bed. **It would not make him healthy, wealthy, and wise**, but it closeted him with memory of Fleur in her fancy frock (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Three, "To Let", p. 163, 1975).

***

Narrow and self - righteous people, only capable of judging the lives of others by their own, are apt to condemn those who make this tragic error, to condemn them for life to the dungeons they have made for themselves. You know the expression: '**She has made her bed, she must lie on it**!' It is a hard-mouthed saying, quite unworthy of a gentleman or lady in the best sense of those words; and I can use no stronger condemnation. I have not been what is called a moral man, but I wish to use no words to you, my dear, which will make you think lightly of ties or contracts into which you enter. Heaven forbid! (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Three, "To Let", p. 177, 1975).

***

In the pocket of his dinner - jacket was a letter from Annette. She was coming back in a fortnight. He knew nothing

of what she had been doing out there. And he was glad he did not. Her absence had been a relief. **Out of sight was out of mind!** And now she was coming back. Another worry! And the Bolderby Old Crome was gone – Dumetrius had got it – all because that anonymous leter had put it out of his thoughts. He furtively remarked the strained look on his daughter's face, as if she too were gazing at a picture that she couldn't buy (J. Galsworthy, The Forsyte Saga, Book Three, "To Let", p. 209, 1975).

***

I examined, too, in thought, the possibility of my ever being able to translate currently a certain little French story-book which Madame Pierrot had that day shown me; nor was that problem solved to my satisfaction ere I felt sweetly asleep.

Well has Solomon said – **"Better is a dinner of herbs where love is, than a stalled ox and hatred therewith."**

I would not now have exchanged Lowood with all its privations, for Gateshead and its daily luxuries (Ch. Bronte, Jane Eyre, p. 63-64, 2000).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղդասարյան Հ.Գ., Ազգամշակութային բաղադրիչը որպես թարգմանական խնդիր /Ատեն. բան. գիտ. թեկն./, Երևան, 1996.-169 էջ:
2. Միրզոյան Վ.Ա., Առածանին վարքականոն /Հայ ժողովրդական ասացվածքներն ու առածները որպես կառավարման և ինքնակառավարման գործնական վարքականոն/, Երևան, Տնտեսագետ, 2002.- 228 էջ:
3. Նազարյան Ա.Հ., Անգլիական առածների և ասացվածքների պատկերազարդ բառարան, Երևան, Ամարաս, 1999.- 320 էջ:
4. Նազարյան Ա.Հ., Բաղդասարյան Հ.Գ., Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, Ամարաս, 2000. - 396 էջ:
5. Амирова Т.А., Ольховиков Б.А., Рождественский Ю.В. Очерки по истории лингвистики. М.: Наука, 1975.-559 с.
6. Бенвенист Э. Общая лингвистика. М.: Прогресс, 1974.-447 с.
7. Верещагин Е.М., Костомаров В.Г. Лингвострановедческая теория слова. М.: Рус. яз., 1980.-320 с.
8. Комиссаров В.Н., Рецкер Я.И., Тархов В.И. Пособие по переводу с английского языка на русский, часть 1, М.: Изд. лит. на иностр. яз., 1960.-176 с.
9. Комиссаров В.Н. Теория перевода. /Лингвистические аспекты/ М.: Высшая школа, 1990.-254 с.
10. Кунин А.В. Курс фразеологии современного английского языка. Дубна: Феникс, 2005.-488 с.
11. Латышев Л.К., Семенов А.Л. Перевод: теория, практика и методика преподавания. М.: АСАРЭМИЯ, 2003.-190 с.
12. Левицкая Т.Р., Фитерман А.М. Проблемы перевода. Москва: Издательство Международные отношения, 1976.-204 с.

13. Мамонтов А.С. Номинативные Единицы-Афоризмы (Пословицы, Поговорки) в аспекте сопоставительного лингвострановедение. /Вестник МГУ. Сер. 19. Лингвистика и Межкультурная Коммуникация/ М., 2002.- С. 88-97.
14. Орлянская Т.Г. Национальная культура через призму пословиц и поговорок. /Вестник МГУ. Сер. 19. Лингвистика и Межкультурная Коммуникация/ М., 2002.- С. 27-51.
15. Сорокин Ю.А., Марковина И.Ю. Текст и его национально-культурная специфика. /Текст и перевод/ М.: Наука, 1988.-164 с.
16. Тер-Минасова С.Г. Язык и межкультурная коммуникация. М.: Слово/Slovo, 2000-624 с.
17. Ярцева В.Н. Контрастивная грамматика. М.: Наука, 1981.-111 с.

ԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

18. Բրոնտե Շ. Չեյն էյր (անգլերենից թարգմանեց Արամ Բուդաղյանը), Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1988.-526 էջ:
19. Գոլսուորդի Ջ. Ասք Ֆորսայթների մասին: /Վեպ/, հատոր I, «Սեփականատերը», (անգլերենից թարգմանեց Կարպիս Սուրենյանը), Երևան, «Հայաստան», 1975.-508 էջ:
20. Գոլսուորդի Ջ. Ասք Ֆորսայթների մասին: /Վեպ/, հատոր II, III, «Ծուղակի մեջ», «Վարծու է տրվում», (անգլերենից թարգմանեց Կարպիս Սուրենյանը), Երևան, «Հայաստան», 1977.- 739 էջ:
21. Գրինվուդ Ջ. Փոքրիկ Շրջմոլիկը (Հարություն Հարությունյանի թարգմանությամբ), Երևան, «Հայպետհրատ», 1964.-253 էջ:
22. Դիկկենս Չ. Օլիվեր Թվիստի Արկածները, Երևան, «Արևիկ», 1988, էջ 223-727:

23. Դիքենս Չ. Մեծ Հույսեր (անգլերենից թարգմանեց Վարդան Փարթամյանը), Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983.-527 էջ:
24. Դոյլ Ա.Կ. Կորուսյալ Աշխարհ (թարգմանեցին հայերեն Խ. Հրաչյանը և Մ. Մեսրոպյանը), Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1985.-292 էջ:
25. Դոջ Մ.Մ. Արծաթե Սահուկներ (Թարգմանված է հայերեն), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1975.-334 էջ:
26. Դրայզեր Թ. Ամերիկյան Ողբերգություն /վեպ 2 հատորով/, (անգլերենից թարգմանեցին Ս. Ալեքսյանը և Հ. Բարսեղյանը), Երևան, «Հայպետհրատ», 1953.-381 էջ:
27. Կրոնին Ա. Միջնաբերդ (անգլերենից թարգմանեց Ալբերտ Խաչատրյանը), Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1979.- 492 էջ:
28. Կուպեր Ջ.Ֆ. Վերջին Մոհիկանը (Հ. Հայրապետյանի թարգմանությամբ), Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1979.-370 էջ:
29. Կուպեր Ջ.Ֆ. Լրտեսը (անգլերենից թարգմանեց Ալբերտ Խաչատրյանը), Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1984.- 444 էջ:
30. Հարդի Թ. Տեսսը Դ'Էրբըրվիլների տոհմից (անգլերենից թարգմանել է Ա. Բուդաղյանը), Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1983.- 446 էջ:
31. Հեմինգուեյ է. Հրաժեշտ Զենքին (անգլերենից թարգմանեց Պերճ Զեյթունյանը), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972.- 300 էջ:
32. Սքոթ Վ. Քվենտին Դորվարդ (թարգմանել է հայերեն բանաստեղծ, թարգմանիչ Արտաշես Պողոսյանը), Երևան, «Լույս» հրատարակչություն, 1985.- 496 էջ:
33. Վոյնիչ է. Բոռ (թարգմանված է հայերեն Շ.Ա. Գրիգորյանի կողմից), Երևան, «Լույս» հրատարակչություն, 1984.-384 էջ:
34. Ուորեն Ռ.Փ. Արքայի Ամբողջ Թիկնազորը (անգլերենից թարգմանեց Կառլեն Դալլաքյանը), Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1976.- 677 էջ:

35. Bronte Ch. Jane Eyre. The United States of America, Copyright © 2000 The McGraw-Hill Companies, 2000.- 430 p.
36. Cooper J.F. The Spy. Moscow, Progress Publishers, 1975.- 397 p.
37. Cooper J.F. The Last of the Mohicans. Great Britain, © Wordsworth Editions Limited, 1994.-329 p.
38. Cronin A.J. The Citadel. Moscow, Higher School Publishing House, 1966.- 486 p.
39. Dickens Ch. Great Expectations. Moscow, Foreign Languages Publishing House, 1949.-96 p.
40. Dickens Ch. The Adventures of Oliver Twist. Moscow, Foreign Languages Publishing House, 1953.-537 p.
41. Dodge M.M. The Silver Skates. Moscow, Foreign Languages Publishing House, 1961.-265 p.
42. Doyle A.C. The Lost World. Leningrad, Prosveshenie, 1974.-187 p.
43. Dreiser T. An American Tragedy. /volume two, Book Three/ Moscow, Foreign Languages Publishing House, 1951.- 402 p.
44. Galsworthy J. The Forsyte Saga, Book One, "The man of property", Progress Publishers Moscow, 1974.-364 p.
45. Galsworthy J. The Forsyte Saga, Book Two, "In Chancery", Progress Publishers Moscow, 1975.-278 p.
46. Galsworthy J. The Forsyte Saga, Book Three, "To Let", Progress Publishers Moscow, 1975.-239 p.
47. Greenwood J. The True history of a Little Ragamuffin. Moscow, Foreign Languages Publishing House, 1954.-250 p.
48. Hardy T. Tess of the D'Urbervilles. Moscow, Foreign Languages Publishing House, 1950.- 416 p.
49. Hemingway E. A Farewell to Arms. Moscow, 'Progress' Publishers, 1976.-320 p.

50. Scott W. Quentin Durward. Moscow, Foreign Languages Publishing House, 1962.-568 p.
51. Voynich E.L. The Gadfly. Moscow, Foreign Languages Publishing House, 1953.-327 p.
52. Warren R.P. All The King's Men. Moscow, 'Progress' Publishers, 1979.-394 p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Առածա-ասացվածքային միավորների թարգմանության եղանակները 8

Վարժություններ 20

Անգլերենի առածա-ասացվածքային միավորների առկայացումը բնագրում և թարգմանության մեջ 24

Վարժություններ 44

Օգտագործված գրականության ցանկ 64

Համակարգչային ձևավորումը՝
Եպրաքսիա Հովհաննիսյանի

Շապիկի ձևավորումը՝
Սյուզաննա Գրիգորյանի

Տպաքանակը՝ 200

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
Հասցեն՝ Երևան, Թումանյան 42
Հեռ.՝ 53-05-52
Web: http://www.brusov.am
E-mail: yslu@brusov.am